

ABCDEFGHIJKLMNPO

**A. AYUNTS, G. ALTIKULANJYAN,  
R. GABRIELIAN, E. HAKOBYAN,  
M. HAKOBYAN, B. KHACHIKYAN,  
I. KOCHARYAN, N. NERSISSYAN,  
V. SIMONYAN**

# **TEXT RENDERING: A TEACHING TOOLKIT**

vwxyz | abcdefghijklmnopqrstuvwxyz | abcdefghij

[ YEREVAN STATE  
UNIVERSITY ]

**YEREVAN STATE UNIVERSITY**

**A. Ayunts, G. Altikulanjyan, R. Gabrielyan,  
E. Hakobyan, M. Hakobyan, B. Khachikyan,  
I. Kocharyan, N. Nersissyan, V. Simonyan**

**TEXT RENDERING:  
A TEACHING TOOLKIT**

Yerevan  
YSU PRESS  
2016

ՀՏԴ 811.111(07)  
ԳՄԴ 81.2Անգլ ց7  
S 552

*Ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակության են երաշխավորել  
ԵՊՀ ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնը,  
ԵՊՀ ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի մեթոդխորհուրդը և  
ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝ Ա. Այունց, ք.գ.թ.

Գրախոսներ՝ Շ. Պարոնյան, ք.գ.դ., պրոֆ.  
Ա. Խաչատրյան, ք.գ.թ.  
Լ. Համբարձումյան  
Ն. Սիրաքյան

**Այունց Ա., Ալթիկուլանջյան Գ., Գաբրիելյան Ռ., Հակոբյան Է.,  
Հակոբյան Մ., Խաչիկյան Բ., Քոչարյան Ի., Ներսիսյան Ն.,  
Սիմոնյան Վ.**

**S 552 Տեքստի վերարտադրում/Ուսումնաօժանդակ ձեռնարկ:** -Եր., ԵՊՀ  
հրատ., 2016, 104 էջ:

Սույն ուսումնաօժանդակ ձեռնարկը միտված է զարգացնելու ուսանողների՝ օտար լեզվով գրվածքներն ըմբռնելու և հայերենից անգլերեն փաստագրական տեքստեր վերարտադրելու կարողությունները: Ձեռնարկը նախատեսված է համալսարանի անգլիական բաժնի ավարտական կուրսերի ուսանողների և նրանց համար, ովքեր կցանկանան կատարելագործել հայերենից անգլերեն տեքստերի վերարտադրման իրենց ունակությունները:

ՀՏԴ 811.111(07)  
ԳՄԴ 81.2Անգլ ց7

ISBN 978-5-8084-2095-3

© ԵՊՀ հրատ., 2016 թ.  
© Հեղ. խումբ, 2016

## CONTENTS

Preface.....	5
Առաջաբան .....	7
Introduction.....	9
PART I.....	13
POLITICS .....	13
Unit 1 .....	13
Unit 2 .....	15
Unit 3 .....	17
Unit 4.....	19
Unit 5 .....	21
Unit 6.....	23
Render the Texts into English.....	25
PART II.....	27
CULTURE .....	27
Unit 1 .....	27
Unit 2 .....	29
Unit 3 .....	31
Unit 4.....	33
Unit 5 .....	35
Unit 6.....	37
Render the Texts into English.....	39
PART III.....	41
MEDICINE .....	41
Unit 1 .....	41
Unit 2 .....	44
Unit 3 .....	46
Unit 4.....	49
Unit 5 .....	52
Unit 6.....	55

Render the Texts into English.....	57
PART IV .....	59
ENVIRONMENT AND ECOLOGY .....	59
Unit 1 .....	59
Unit 2 .....	61
Unit 3 .....	64
Unit 4 .....	66
Unit 5 .....	69
Unit 6 .....	72
Render the Texts into English.....	74
KEYS .....	76
PART I POLITICS .....	76
PART II CULTURE .....	81
PART III MEDICINE.....	87
PART IV ENVIRONMENT AND ECOLOGY .....	96

## Preface

Text Rendering is a way for students to break down texts, especially more difficult expository writing, into basic elements, and create a new text at the same time. The goals of this strategy are twofold:

- to expand students' understanding of a non-literary text in their native language,
- to create an adequate interpretation of a piece of writing by translating it into a target language.

The present handbook is meant to facilitate students' ability to render texts (in particular newspaper articles) from Armenian into English. The range of topics varies, including articles concerning political issues, cultural topics, healthcare problems, environmental protection, etc. Accordingly, the handbook includes 4 parts, namely **Politics**, **Culture**, **Medicine** and **Environment and Ecology**. Each **Part** consists of 6 **Units**, having similar structure. Before each piece of text a glossary of Armenian terms and their English equivalents is provided. The Glossary highlights the key ideas of the article and focuses on the most important words or phrases necessary for rendering the text. Students then are assigned to render the piece of text that follows. After rendering the text, the students have to perform a task that aims at activating the key words and expressions used in the corresponding text/unit. Finally, each part contains two newspaper articles on the current topic for rendering into English. No doubt, one of the instructional advantages of the handbook is the fact that the model translation of the Armenian articles included in the units is provided at the end (**Keys**). Hence, having done the renderings with the help of the given glossary, the students will be able to check their own translation and find their mistakes on their own.

The texts and their model translations have been taken from a reliable online source, namely the online newspaper ArmeniaNow.com (<http://www.armenianow.com>). The additional texts for rendering have

been picked out from Armenian newspapers – Aravot, Azg, Hayastani Hanrapetutyun, etc.

Hopefully, the method used in the handbook will enable students to gain confidence in the sphere of rendering texts, as well as will enrich their vocabulary in certain specified fields.

The handbook is meant for senior students of linguistic faculties, as well as for those who would like to master the technique of rendering texts from Armenian into English.

Finally, we would like to state that the present handbook is a pioneering attempt within student-centered teaching. The material of the textbook was compiled owing to the efforts of a group of senior students studying in the department of English for Cross-Cultural Communication, during their classroom activities.

We would also like to express our deepest gratitude to Yerevan State University, Faculty of Romance and Germanic Philology, the Chair of English for Cross Cultural Communication and, of course, the Student Scientific Society for their willingness and kind support in the publication of the handbook.

## Առաջարան

Տեքստերի վերարտադրումն ուսանողներին հնարավորություն է ընձեռում վերծանելու տեղեկատվական բնույթի բարդ գրվածքները, ինչի շնորհիվ առավել դյուրին է դառնում բացահայտել դրանց իմաստը և նոր տեքստեր կազմել:

Սույն ձեռնարկը միտված է զարգացնելու ուսանողների՝ տեքստը հայերենից անգլերեն տեքստը վերարտադրելու կարողությունները: Թեմատիկ բազմազանությամբ հողվածները հիմնականում վերաբերում են քաղաքական, մշակութային, առողջապահական, բնապահպանական խնդիրներին: Յուրաքանչյուր հողվածի համար առանձնացվել են հայերեն և անգլերեն համարժեքների հիմնական գաղափարներն արտահայտող առանցքային բառերն ու արտահայտությունները:

Տեքստը վերարտադրելուց հետո ուսանողին տրվում է բառապաշարն ամրապնդող ևս մեկ առաջադրանք: Յուրաքանչյուր թեմա ամփոփվում է թերթային երկու հողվածով՝ հայերենից անգլերեն վերարտադրելու համար:

Ձեռնարկի ուսուցողական առավելություններից մեկն էլ այն է, որ գրքի վերջում զետեղված են հայերեն հողվածների անգլերեն թարգմանությունները, որոնք կօգնեն ուսանողին վերարտադրական գործողություններ կատարելուց հետո ինքնուրույն ստուգել իր աշխատանքը և գտնել սխալները:

Տեքստերը և դրանց համարժեք թարգմանությունները վերցված են վստահելի ինտերնետային աղբյուրից՝ ArmenianNow.com-ից: Վերարտադրման համար հավելյալ տեքստերն ընտրված են հայկական թերթերից՝ «Առավոտ», «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն» և այլն:

Հույս ունենք, որ ձեռնարկում օգտագործված մեթոդն ուսանողին հնարավորություն կտա տեքստի վերարտադրման միջոցով հարստացնել իր բառապաշարը նշված բնագավառներում:

Ձեռնարկը նախատեսված է համալսարանի անգլիական բաժնի ավարտական կուրսերի ուսանողների համար, ովքեր կցանկանան կատարելագործել հայերենից անգլերեն տեքստերի վերարտադրման իրենց տեխնիկան:



Նշենք նաև, որ սույն ձեռնարկը նոր գաղափարներ ու մեթոդներ պարունակող փորձ է ուսանողակենտրոն ուսուցման շրջանակներում: Ձեռնարկում գետեղված նյութերը հավաքել են Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Սիջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի մի խումբ ուսանողներ իրենց ուսումնառության ընթացքում:

Խորին շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց (Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, Սիջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն, ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն), ովքեր պատրաստակամորեն աջակցեցին այս գիրքը տպագրելուն:

## Introduction

The activity of text rendering has a long-standing tradition and has been widely practiced in the process of foreign language teaching, mainly at advanced levels. Moreover, in our rapidly changing world its role has become of paramount importance. Nowadays, as cultural exchanges have been widening and intercultural communication has been intensifying, the phenomenon of translating and rendering texts has become fundamental. Accordingly, the present textbook proceeds primarily from the perspectives of the academic aspect of foreign language teaching - "Text Rendering". It is an attempt to demonstrate that text rendering is a vastly complex field with many far-reaching implications.

What should the student know in order to be able to render a text from one language into another? In this regard, Bell (1987)<sup>1</sup> argues that a technical translator (in our case, the students who do the rendering) should have access to five distinct kinds of knowledge - target language (TL) knowledge; text-type knowledge; source language (SL) knowledge; subject area ('real world') knowledge; and contrastive knowledge. Lack of knowledge or control in any of these areas would mean that the student cannot render a text. This would necessarily involve seeking integration between the linguistic knowledge of the two languages with specific and general knowledge of the domain and of the world via comparative and contrastive linguistic knowledge.

Most importantly, the student must possess linguistic competence in both languages and communicative competence in both cultures. Rendering involves translation to some extent, and as Toury (1978)<sup>2</sup> implies "Translation is a kind of activity which inevitably involves at least two languages and two cultural traditions". As this statement

---

**1 Bell, R. T.** "Translation Theory: Where Are We Going?", *Meta: Translators' Journal*, Volume 32 (4), Montreal University Press, 1987, pp. 403-415.

**2 Toury, G.** "The Nature and Role of Norms in Translation", *The Translation Studies Reader*, Routledge, London, 1978 (revised 1995), pp. 198-211.

implies, translators are permanently faced with the following problems:

- how to treat the cultural aspects implicit in a source text (ST),
- to find the most appropriate technique which will enable them to convey these aspects successfully in the target language (TL).

Language and culture may, then, be seen as being closely related and both aspects should be considered for translation. The notion of culture is essential to considering the implications for translation and, despite the differences in opinion as to whether language is part of culture or not, the two notions appear to be inseparable. Thus, it is of paramount importance here that the student should know equivalent phrases in different domains which are provided in the form of glossaries before each piece of text meant for rendering. This will especially draw the students' attention to the culture and domain specific items in each sphere.

Finally, text rendering does not involve only translating. It also involves the skills of summarizing and paraphrasing. The content of the rendered text in the target language should cover approximately one third of the source text. Thus, students should also be able to apply the skills of skimming and scanning learnt before, and learn how to outline the main idea which presents relevant information.

The **Table** below presents the plan and some useful expressions used while rendering the article.

The plan for Rendering the text		Some expressions to be used while rendering the text			
1.	Where is the article taken from?	The announcement The article The editorial The information The idea	is taken from a (an)	annual (yearly) daily monthly weekly ...	digest issue magazine newspaper ...

		The interview The round-up The text The statement ...			
2.	The title of the (article)	Title Headline Heading The article under the headline "..." The article is headlined "..."			
3.	The author of the (article)	The author of the article is ... The article is written by... ...			
4.	The main idea of the (article)	The article The editorial The statement	stress(es) emphasizes point(s) out follow(s) touch(s) upon review(s)	a (an, the), of	events, affairs questions problems issues
		A disputable question A vital question An urgent question A burning question		home news international news world news local news	
		The events at home and abroad The latest events Current events The key-note of the article is... The main idea of the article is... The article is about...			

5.	The contents of the (article)	The author of the article	believes considers explains describes points out states stresses thinks writes
6.	Your opinion of the article	I found the article interesting (important, dull, of no value, too hard to understand). I think that the facts given in the article are... My opinion is...	

**PART I**  
**POLITICS**

**Unit 1**

**Glossary**

սահմանադրական փոփոխություններ իրականացնել	to draft constitutional amendments
հանձնաժողով	commission
անցում	transition
խորհրդարանական համակարգ	parliamentary system
սահմանադրական իրավունք	constitutional law
նախագիծ	draft
քաղաքական ուժեր	political forces
բացառել	to rule out
փաթեթ	package
կառավարման կիսանախագահական համակարգ	semi-presidential form of government
հայեցակարգ	concept
սատարել բարեփոխումները	to back the reforms
առաջատար ընդդիմադիր կուսակցություններ	leading opposition parties

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Սահմանադրական բարեփոխումներ. փորձագետների հանձնաժողովը՝  
«հօգուտ խորհրդարանական համակարգի»**

«Հայաստանի սահմանադրական փոփոխությունների նպատակով ստեղծված հանձնաժողովն աշխատում է մեկ՝ կառավարման խորհրդարանական համակարգի անցման նախագծի վրա», - ասել է սահմանադրական իրավունքի մասնագետ Վարդան Պողոսյանը: «Մենք աշխատում ենք մեկ նախագծի վրա, և, կախված քաղաքական կոնսուլտացիաների բնույթից, քաղաքական ուժերի առաջարկություններից, հնարավոր են մաս որոշակի մոդիֆիկացիաներ նախագծում», - ասել է Պողոսյանը:

Ավելի վաղ իշխող Հայաստանի հանրապետական կուսակցությունը չէր բացառել, որ Ազգային ժողովի քննարկմանը կարող է ներկայացվել սահմանադրական փոփոխությունների երկու փաթեթ, որոնցից մեկը նախատեսում է կառավարման գործող կիսանախագահական համակարգի կատարելագործում:

Մասնագիտական հանձնաժողովը 14 քաղաքական ուժերից սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի վերաբերյալ առաջարկություններ է ստացել: Սպասվում է, որ հանձնաժողովի անդամները մայիսի 18-19-ը հայեցակարգը կքննարկեն Փարիզում Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ:

Ազգային ժողովում ներկայացված Հայաստանի առաջատար ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասը չի սատարում բարեփոխումները:

**Task 2: Make a short report on the present day political situation using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 2

### Glossary

ԱՄՆ պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո	The U.S. Department of State's Bureau of Democracy, Human Rights and Labor
հրապարակել	to issue
արձանագրել	to report
կառավարության գործունեության թափանցիկության բացակայության	lack of transparency in government
իրավունքների սահմանափակում	limitations on the right
շարունակվող կոռուպցիա	persistent corruption
պնդումներ	allegations
ձախողել	to undermine
օրենքի գերիշխանություն	the rule of law
սահմանափակ քայլեր ձեռնարկել	to take limited steps
ցածր և միջին օղակներ	low- and mid-level officials
քարոզարշավ իրականացնելու ազատ իրավունք	ability to campaign freely
անաչառության	impartiality
չարաշահում	misuse
ընտրակաշառք	vote buying

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **ԱՄՆ զեկույցն անդրադարձել է Հայաստանում մարդու իրավունքների հիմնախնդիրներին**

ԱՄՆ պետդեպարտամենտի ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն հրապարակել է աշխարհում 2013 թ.-ի Մարդու իրավունքների վերաբերյալ ամենամյա զեկույց:

Ձեկույցում նշվում է Հայաստանի համար տարբեր ոլորտներում ան-



ցյալ տարի արձանագրված խնդիրները:

«Մարդու իրավունքների ոլորտում առավելապես խնդիրները կապված են եղել կոռուպցիայի և կառավարության գործունեության թափանցիկության բացակայության, կառավարությունը փոխելու հարցում քաղաքացիների իրավունքների սահմանափակման և դատական իշխանության անկախության սահմանափակման հետ: Իշխանության բոլոր մակարդակներում շարունակվող կոռուպցիայի մասին պնդումներ ձայնողել են օրենքի գերիշխանությունը, թեև իշխանությունները սահմանափակ քայլեր են ձեռնարկել՝ ուղղված ցածր և միջին օղակներում կոռուպցիայի համար պատժելուն», - նշվում է ամենամյա զեկույցում:

Չեկույցում նշվում է, որ թեև թեկնածուները քարոզարշավ իրականացնելու ազատ իրավունք են ունեցել, նախագահի ընտրությունների ժամանակ խախտումները վերաբերել են պետական կառավարման կողմից անաչառության բացակայությանը, պետական ռեսուրսների չարաշահմանը՝ հոգուտ իշխող կուսակցության, ընտրակաշառքների մասին վստահելի տեղեկություններին:

Չեկույցում նաև մանրամասն անդրադարձ է կատարվել անցյալ տարվա ընթացքում գրանցված այլ չարաշահումների, կաշառակերության դեպքերի և մարդու իրավունքների խնդիրների:

**Task 2: Write a newspaper article using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 3

### Glossary

խթանել արտահանումը	to stimulate exports
տեղիք տալ	to spark
բուռն քննարկում	heated debate
շահութահարկ	profit tax
մատնանշել	to point
հանքարդյունաբերության ոլորտ	mining industry
նոր պայմաններ տարածել	to hold out new possibilities
վտանգ սպառնալ	to see risk
տեղական արտադրողներ	local producers
ընդդիմադիրներ	opposition lawmakers
օրենքի ընդունում	passage of the bill
սահմանափակել մյուսներին	to restrict others
հնարավորությունների գինը	opportunity cost
կառավարության հավանությանն արժանացած	government-approved

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Խթանել արտահանումը. կառավարության ներկայացրած նոր օրինագիծը խորհրդարանում բուռն քննարկումների տեղիք է տալիս**

Այս շաբաթ խորհրդարանում բուռն քննարկումների թնուրհուով անցած «Շահութահարկի մասին» օրինագիծը, որով, ըստ կառավարության առաջարկությունների, հնարավորություն է տրվելու Հայաստանից 50 մլրդ դրամ (105 մլն դոլար) և ավելի արժեքով ապրանք արտահանողներին վճարել ոչ քե օրենքով սահմանված 20 տոկոս, այլ ընդամենը 2 տոկոս շահութահարկ, որոշվել է քվեարկության դեմ մարտի սկզբին արտահերթ նիստում:

Մինդեռ օրինագիծը քննադատողները մատնանշում են. այսօր Հայաստանում ընդամենը մեկ գործող ընկերություն կա, որը նշված 50 մլրդ դրամ ծավալով ապրանք է արտադրում ու արտահանում, այն էլ՝ հանքարդյունաբերության ոլորտում, մինչդեռ հանքարդյունաբերության համար կառավարությունը նախատեսել է բացառություններ: Օրենքի փոփոխությունները այս ոլորտի վրա չեն տարածվելու: Փոխարենը՝ նոր պայմանները կտարածվեն բացառապես արտահանմամբ զբաղվող և տարեկան 50 մլրդ դրամի ապրանք արտահանող ընկերությունների վրա:

ԱԺ պատգամավոր, ՕԵԿ խմբակցության անդամ Միեր Շահգեղյանի կարծիքով՝ օրենքի ընդունմամբ մեծ վտանգ է սպառնում տեղական արտադրողին:

Ընդդիմադիրները պնդում են, որ օրենքի ընդունմամբ կստեղծվի մի իրավիճակ, երբ դրսից կարող են գալ և իրենց ձեռքում մոնոպոլացնել ողջ արտահանումը, մինչդեռ նման կարգի որոշումները ոչ թե ինչ-որ մեկին առավելություն են տալիս, այլ սահմանափակում են մյուսներին:

«Այսպես կոչված հնարավորությունների գինը մեծանում է», - ասում է ՀԱԿ պատգամավոր, տնտեսագետ Հրանտ Բագրատյանը:

Համաձայն փոփոխությունների՝ արտահանող ընկերությունները պետք է ունենան նաև կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագիր և եկամուտ չստանան ՀՀ տարածքում:

**Task 2: Write an interview with an MP using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 4

### Glossary

առաջ մղել	to press ahead
սահմանադրական բարեփոխում	a constitutional reform
խորհրդարանական հանրապետություն	a parliamentary republic
Ազգային ժողովի նախագահ	Parliament Speaker
նորընտիր առաջնորդ	the newly elected leader
ճեպագրույց	press briefing
իշխող կուսակցության բարձրաստիճան անդամ	a senior member of the ruling party
Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ)	Republican Party of Armenia (RPA)
հանրաքվեի դնել	to put on a referendum
քննադատություն հարուցել	to draw criticism
կառավարական բարձր պաշտոն	a top government post
«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ)	The Prosperous Armenia Party (PAP)
ուժեղ, ակտիվ քննադատ	a vocal critic

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Ենթակա է փոփոխության. Հայաստանի ղեկավարությունը վերահաստատում է սահմանադրական բարեփոխումների ծրագրերը**

Ներկայիս վարչակազմն առաջ կմղի սահմանադրական բարեփոխումները, որոնք, ինչպես սպասվում է, Հայաստանը կդարձնեն խորհրդարանական հանրապետություն՝ հինգշաբթի հայտարարել է Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը:

Նաիրա Զոհրաբյանը՝ ԲՀԿ նորընտիր առաջնորդը, հինգշաբթի ճե-

պագրույցում հայտարարել է, որ կուսակցությանը ժամանակ է անհրաժեշտ՝ հետագա մարտավարությունը մշակելու համար: Իսկ սահմանադրական բարեփոխումների նկատմամբ ԲՀԿ-ի վերաբերմունքի մասին հարցին վերջինս պատասխանել է, որ այս հարցում կուսակցության դիրքորոշումը չի փոխվել: Սակայն նա չի նշել, թե արդյո՞ք ԲՀԿ-ն շարունակելու է ակտիվորեն հանդես գալ փոփոխությունների դեմ:

Լրագրողների հետ ճեպագրույցում նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարած իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) բարձրաստիճան անդամը հայտարարել է, որ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համապատասխան նախագիծը, ամենայն հավանականությամբ, հանրաքվեի կորվի այս տարվա աշնանը կամ հաջորդ տարվա սկզբին:

Անցյալ տարի նախաձեռնած բարեփոխումները Հայաստանում հարուցեց ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասի քննադատությունը: Դեռևս 2014 թ. ապրիլին նախագահ Սերժ Սարգսյանն ասել է, որ 2018-ին իր պաշտոնավարման երկրորդ և վերջին ժամկետի ավարտից հետո չի ձգտելու բարձր պաշտոն զբաղեցնել: «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), որը փոփոխությունների ամենատեղ քննադատներից մեկն էր, հինգշաբթի փոխել է իր առաջնորդին:

**Task 2: Compose a dialogue using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 5

### Glossary

անվասայլակով տեղաշարժվող	wheelchair-friendly; wheelchair-bound people
հաշմանդամություն ունեցող անձինք	disability friendly
հատուկ կարիքներով անձինք	people with special needs
ծրագրի շրջանակներում	as part of a program
բավարարել կարիքները	to serve the needs
մատչելիություն ապահովել	to facilitate access
վարչական շրջաններ	administrative districts
քաղաքապետարան	Mayor's Office
հույս հայտնել	to voice a hope

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Անվասայլակով տեղաշարժվող. Երևանում տասն ավտոբուս կահավորվել է հատուկ կարիքներով մարդկանց համար**

Երևանում 10 ավտոբուս է կահավորվել սայլակով տեղաշարժվող մարդկանց կարիքները բավարարելու համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիությունն ապահովելու քաղաքապետարանի ծրագրի շրջանակներում:

Ինչպես նշում է քաղաքապետարանը՝ ընտրված առայժմ թվով 5 երթուղիները հնարավորություն կտան գրեթե բոլոր վարչական շրջաններից հատուկ կարիքներով անձանց քաղաքի կենտրոն տեղափոխվելու և հակառակ ուղղությամբ վերադառնալու:

Այսօր քաղաքապետարանի մոտ տեղի է ունեցել ավտոբուսները վերելակներով կահավորելու ծրագրի շնորհանդեսը, որի շնորհիվ անվասայլակով տեղաշարժվող մարդիկ հնարավորություն կունենան ինքնու-

ըույն ավտոբուսում հայտնվել:

Քաղաքապետարանի պաշտոնյան հույս է հայտնել, որ քաղաքի բնակիչները նույնպես կօգնեն հատուկ կարիքներով մարդկանց օգտվելու հասարակական տրանսպորտից:

**Task 2: Make a short report on the needs of disabled people using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 6

### Glossary

Արտգործնախարար	Foreign Minister (FM)
Եվրասիական տնտեսական միություն	Eurasian Economic Union (EEU)
անդամակցություն	membership
ձեռք բերել պայմանավորվածություն	to reach agreement
գործընկեր	counterpart
հավանական համարել	to see possibilities
եռակողմ	trilateral
մասնավորապես	specifically
անդրադառնալ որևէ բանի	to address sth
խոչընդոտել	to hinder
միջազգային իրավունք	international law
ուժգնացող բողոքներ	escalating sentiments
գոյակցել	to collaborate
շահերից բխել	to be in the interests of

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

#### **Իրանի արտգործնախարար. Եվրասիական անդամակցությունը լավ է Իրան-Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների համար**

Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը լավ հնարավորություն է ստեղծում Հայաստանի և Իրանի հարաբերությունների զարգացման համար՝ երեքշաբթի հայտարարեց հունվարի 26-ից պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Իրանի արտգործնախարար Մոհամադ Ջավադ Չարիֆը:

«Լավ պայմանավորվածություններ ենք ձեռք բերել ու պատրաստ



ենք համագործակցելու բոլոր ոլորտներում», - հայաստանցի իր գործընկերոջ՝ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումից հետո տեղի ունեցած ասուլիսում ասաց Ջարիֆը:

Իրանի արտաքին քաղաքականության պատասխանատուն հավանական համարեց նաև Իրան-Հայաստան-Ռուսաստան եռակողմ համագործակցությունը մասնավորապես հաղորդակցության ոլորտում.

«Մենք օգտագործում ենք բոլոր հնարավորությունները Հայաստանի հետ համագործակցությունն ընդլայնելու համար, իսկ ԵՏՄ-ն այդ հնարավորություններից մեկն է»:

Անդրադառնալով Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման ծրագրին՝ Էդվարդ Նալբանդյանն ու Մոհամադ Ջավադ Ջարիֆը շեշտեցին, որ գործընթացը խոչընդոտող խնդիրներ չկան, արդեն կան ձեռք բերված համաձայնություններ ու քաղաքական կամք՝ դրանք կյանքի կոչելու համար:

Ադրբեջանի հետ սահմանակից Իրանի արտգործնախարարն ասուլիսում նաև շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պետք է լուծվի միջազգային իրավունքի շրջանակներում:

Ֆրանսիայում տեղի ունեցած ահաբեկչության հետևանքով Արևմուտքում վերջին շրջանում մահմեդականության դեմ ավելի ուժգնացող բողոքների ֆոնին Մոհամադ Ջավադ Ջարիֆն ընդգծեց, որ Հայաստանի և Իրանի հարաբերությունները վառ օրինակ են, թե ինչպես կարող են իսլամն ու քրիստոնությունը խաղաղ գոյակցել:

Իրանի արտգործնախարարը Երևանում անդրադարձավ նաև իր երկրի և Արևմուտքի միջև ընթացող միջուկային բանակցություններին՝ տեղեկացնելով, որ դրանք վերջնական փուլում են, ու ներկայումս տեխնիկական մանրամասներ են քննարկվում:

«Կարծում ենք՝ այդ լուծումը որևէ մեկին վնաս չէ և տարածաշրջանի բոլոր երկրների շահերից է բխում»:

**Task 2: Write a newspaper article using the active vocabulary provided in the glossary.**

## Render the Texts into English

### Text A

#### **ՀՀԿ ներկայացուցիչը և ընդդիմությունը. իշխանափոխություն կարող է լինել միայն ընտրությունների միջոցով**

Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, անդրադառնալով «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի առաջիկա համազգային հանրահավաքին, նշեց, որ ցանկացած քաղաքական ուժ իրավունք ունի քննադատելու իշխանությանը, սակայն իշխանափոխության պետք է հասնել բացառապես ընտրությունների միջոցով:

Այսօր՝ ժամը 18:00-ին, Ազատության հրապարակում կմեկնարկի «Նոր Հայաստան» շարժման հանրահավաքը, իսկ շարժման առաջնորդները հայտարարել են, որ այնտեղ կմնան այնքան ժամանակ, մինչև չտապալեն Սահմանադրության փոփոխությունների դեկտեմբերի 6-ի հանրաքվեն:

ԱԺ փոխնախագահի կարծիքով՝ մոբիլիզացիայի մասին խոսք անգամ գնալ չի կարող, քանի որ այդպիսի բան կարող է լինել միայն պատերազմի ժամանակ: «Յանկացած քաղաքացի, ցանկացած կուսակցություն, ցանկացած քաղաքացիական նախաձեռնություն պետք է կարողանա օրենքով սահմանված կարգով իր կարծիքն արտահայտել նաև հանրահավաքների միջոցով:

Բայց անկախ այն բանից, դու իշխանություն<sup>օ</sup>ւն ես, թե<sup>օ</sup> ընդդիմություն, եթե քո գործողությունները չեն տեղավորվում ՀՀ օրենսդրության շրջանակներում, բնականաբար դա չի կարող ողջունվել», - երկուշաբթի լրագրողների հետ հանդիպմանն ասաց Շարմազանովը: Ըստ նրա՝ իշխանությանը պետք է քննադատել, սակայն քննադատությունն էլ պետք է առողջ լինի:

«Մեր երկրում իշխանափոխություն, իշխանության ձևավորում լինելու է և պետք է լինի բացառապես ընտրությունների միջոցով, ով ցանկանում է գալ իշխանության, թող գա մասնակցի ընտրություններին, հաղթի ընտրություններում և բարով կառավարի, մանավանդ նման աշխարհա-

քաղաքական նոր իրողությունների պայմաններում թույլ չենք տա մեր երկրում արհեստականորեն լավաժություն ստեղծվի»,- եզրափակեց նա:

**Text B**

**Վարկ գեների համար. Ռուսաստանը տրամադրում է 200 մլն դոլար**

Ռուսաստանը Հայաստանին կտրամադրի «արտոնյալ արտահանման վարկ»՝ Ռուսաստանի արտադրած սպառազինություն ձեռք բերելու նպատակով՝ ասել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ մանրամասնելով, որ համաձայնագիրը ստորագրվել է ուրբաթ կայացած ռուս-հայկական միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում:

200 մլն դոլարի վարկը հնարավորություն կտա «զգալիորեն ընդլայնել Հայաստանի զինված ուժերի զինանոցի ժամանակակից սպառազինման տեսականին»՝ նշել է նախագահ Սարգսյանն ուրբաթ ռուս-հայկական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսական կողմի նախագահ, ՌԳ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի հետ հանդիպմանը՝ ըստ նախագահի մամուլի ծառայության: Նախագահը, սակայն, չի մանրամասնել, թե ժամանակակից սպառազինման ի՞նչ տեսականի է ձեռք բերվելու դրանով:

Որպես Ռուսաստանի գլխավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ՝ Հայաստանն արդեն իսկ ձեռք է բերել ռուսական զենք արտոնյալ գներով, ինչպես նաև՝ անվճար է ստացել:

**PART II**  
**CULTURE**  
**Unit 1**

**Glossary**

մտահոգել	to raise concern over
պետի տեղակալ	deputy chief
իրականացնել վարչական վարույթ	to start administrative case
օրենսդրությունը կաղում է	legislation is incomplete
ներկայացնել կառավարությանը	to turn to the government
սայլը տեղից շարժվել	to break the ice
ստուգաթերթ	inspection papers
ստուգումներ իրականացնել	to conduct inspections
հայատառ գրել	to use Armenian letters
լատինատառ հայերեն	Latin letters for Armenian
նկատվել	to be registered

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Մայրենիի օրվան ընդառաջ, մասնագետներին մտահոգում է հայոց  
լեզվի պահպանությունը**

Մայրենիի միջազգային օրվան ընդառաջ հայերենի անաղարտությանը մտահոգ մասնագետներն ահազանգում են, որ Հայաստանում իրենց առաքելությանը խանգարող խնդիրները շատ են ու ամենուր:

Օրինակ՝ շատ ձեռնարկատերեր նախընտրում են իրենց գովազդային ցուցանակները գրել ոչ հայատառ՝ ուրբաթ լրագրողների հետ հանդիպմանն ասաց լեզվի պետական տեսչության պետի տեղակալ Մարինե Հովյանը:

Փետրվարի 21-ին նշվող մայրենիի միջազգային օրվան ընդառաջ Հովյանը տեղեկացրեց, որ անցյալ տարի նման խախտումների վերաբերյալ 42 վարչական վարույթ է իրականացվել և գրեթե 3,5 միլիոն դրամ մուտք ապահովվել պետբյուջե:

«Օրենսդրությունը կաղում է, օրենսդրական ճշգրտումների կարիք կա, և մենք մեծ փաթեթով մի անգամ ներկայացրել էինք կառավարություն: Սկզբում թվում էր, թե ըմբռնում կար, թե սայլը տեղից շարժվելու է, բայց, ցավոք, այդպես չէ», - ասաց Հովյանը՝ հավելելով, որ մեկ տարի է՝ իրենց ստուգաթերթերը չեն հաստատվում:

«Այսօր անգամ լեզվի տեսչության ստուգաթերթերը չեն հաստատվել կառավարության կողմից, ինչո՞վ պետք է ստուգումներ իրականացնենք»:

Այրուհանդերձ, Հովյանը չմոռացավ նշել նաև դրական տեղաշարժերի մասին, օրինակ՝ փետրվարի 7-ը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի հայ օգտատերերի մի մասը հռչակել է համացանցում հայատառ գրելու օր՝ այսլեբայ յուրօրինակ պայքար սկսելով լատինատառ հայերենի դեմ:

Իսկ փետրվարի 19-ին՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, Հայաստանում արդեն մի քանի տարի նշվում է գիրք նվիրելու օրը, և հատկապես այս տարի դրական շարժ է նկատվել, դրա մասին են վկայում գրախանութներում եղած հերթերը:

Հատկանշական է, որ հինգշաբթի՝ Կառավարության նիստից առաջ, վարչապետ Հովիկ Աբրահամյանը նախքան օրակարգին անցնելը կառավարության անդամներին նվիրել է Վահան Հովհաննիսյանի «Մանդիլիոն» վեպը և խորհուրդ է տվել Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ընթերցել:

**Task 2: Make a small report about the concerns over Armenian language protection using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 2

### Glossary

անմոռուկ	Forget-me-not
մուտք գործել	to make its way into
լայն տարածում ստանալ	to take a more prominent place
ծայր առնել	to peak
զանգվածային ջարդերը վերածել պետական քաղաքականության	to turn massacres into state genocidal politics
սպանդի ենթարկել	to slaughter
100-րդ տարելից	Centennial
«Հիշում եմ և պահանջում»	“I Remember and Demand”
Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր	Memorial to the Armenian Genocide victims at Tsitsernakaberd
հայկական սփյուռք	Armenian Diaspora
իր մեջ մեծ գաղափար կրել	to contain much notion in it
ժողովրդականություն վայելել	to become widely popular

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

#### **Անմոռուկ. Հայոց ցեղասպանության 100-րդ խորհրդանշանը աստիճանաբար «մուտք է գործում» հայերի կյանք**

Անցյալը, ներկան, ապագան, լույսն ու հավերժությունը խորհրդանշող գույներով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների խորհրդանշան անմոռուկը վերջին շաբաթներին ավելի լայն տարածում է ստանում ու մտնում հայերի կյանքի մեջ:

Օսմանյան կայսրությունում դեռևս 19-րդ դարում ծայր առած հայերի զանգվածային ջարդերը 1915-ին Թուրքիան վերածեց պետական քաղաքականության ու հաջորդող տարիներին սպանդի ենթարկեց և տեղահանեց շուրջ 1,5 միլիոն հայերի: 2015-ին աշխարհի տարբեր կողմերում գտնվող հայերը հիշատակության բազմաթիվ միջոցառումներ են

անցկացնելու Հայոց այս մեծ ցավի ու ողբերգության 100-րդ տարելիցին նվիրված:

Ըստ 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի՝ մեկդարյա տարելիցի խորհրդանշան ընտրվել է հենց «Հիշում եմ և պահանջում» նշանաբանով անմոռուկը, քանի որ ծաղկի մեջ ներկայացված է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի 12 սալաքարերի գրաֆիկական պատկերը:

5 թերթիկներից բաղկացած ծաղկաթերթիկները խորհրդանշում են աշխարհի հինգ մայրցամաքները, որտեղ սփռվել են հայերը Յեղասպանությունից հետո և ստեղծել հայկական սփյուռքը:

Ծաղկի գունային երանգները չորսն են՝ կենտրոնում սևն է, որը խորհրդանշում է հայերիս անցյալը, այնուհետև այն պարուրվում է դեղինով, որը պատկերում է լույսը և Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը խորհրդանշող, շրջանաձև դասավորված իր 12 սյունների տեսքով՝ հավերժությունը: Բաց մանուշակագույնը ներկան է, իսկ գերակշռող մանուշակագույնը՝ ապագան:

Իր մեջ մեծ գաղափար կրող փոքրիկ ծաղիկը կարճ ժամանակում հասցրեց մեծ ժողովրդականություն վայելել հայերի շրջանում: Տարբեր հեռուստաընկերությունների հաղորդավարներ ներկայանում են հենց այդ կրծքանշանով:

Անմոռուկի գաղափարը կարծես թե շատ է դուր է եկել նաև իշխող կուսակցությանը՝ և՛ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, և՛ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչների որոշ մասն իրենց ելույթներում ներկայանում են անմոռուկով:

**Task 2: Write a newspaper article about the Centennial of the Armenian Genocide using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 3

### Glossary

ջրբաժան	watershed
գեղարվեստական ղեկավար	artistic director
խաղացանկ	playlist
արված լինել փարաջանովյան ոգով	to be done in tune with Parajanov's spirit
դաշինք	alliance
նվիրել	to dedicate
փարատել	to dispell
կարծրատիպ	stereotype
նորարարական արվեստը գնահատող	innovative art appraiser
(հովանավորների) բացակայություն	lack (of sponsors)

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Փարաջանովի հյուրասրահ. Մոսկվայի թատրոնը Հայաստանում հանդես է գալիս ներկայացումներով**

Մոսկվայի Փարաջանովի անվան թատրոնում ներկայացումները կոտրում են բեմ-հանդիսատես ջրբաժանը՝ լրագրողների հետ հանդիպմանն ասաց թատրոնի գեղարվեստական ղեկավար Վլադիմիր Գաբրեն, ով Հայաստանում էր Թատրոնի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ:

«Մեզ մոտ յուրահատուկ է ոչ միայն խաղացանկը, այլ նաև բեմի հարդարանքը, փարաջանովյան ոգով է արված ամեն ինչ, չկան թատերական բազկաթռռներ, այլ միայն կլոր սեղանիկներ: Մեր թատրոնը Փա-



րաջանովի հյուրասրահն է, որտեղ հանդիսատեսին՝ մեր հյուրին, գինի, աղանդեր ու միրգ ենք հյուրասիրում»,- ասաց նա:

Գեղարվեստական ղեկավարի խոսքով՝ այն, ինչ իրենք ներկայացնում են, նոր քատերական տեսակ է, կինոյի և բեմի ժանրերի դաշինք:

Ներկայացումներում օգտագործում ենք կինոտեխնոլոգիաներ, այդ ներկայացումներից է «Արմենիադան»՝ նվիրված է Յեղասպանության 100-րդ տարելիցին, որը Մոսկվայի պրեմիերայից հետո ներկայացրինք Երևանում»:

Վլադիմիր Գաբբեի խոսքով՝ ներկայացումը շատ լավ ընդունվեց հայ հանդիսատեսի կողմից, որը փարատեց ճիշտ չընկալվելու իրենց մտավախությունը:

Երկրորդ ներկայացումը, որ խաղացվելու է հոկտեմբերի 19-ին Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմում, «Կյանքը չես խաղալու կրկին» ներկայացումն է, որը ռուսական պոեզիայի՝ Վիսոցկու, Բրոդսկու, Յվետասայի, Ախմատովայի ստեղծագործությունների և դասական երաժշտության խառնուրդ է:

«Այն ջերմ արձագանքը, որ ստացանք հայ հանդիսատեսից հույսս ամսին, մեզ ստիպեց ևս մեկ անգամ կրկնել այն: Սա կոտրում է կարծրատիպը, թե Հայաստանում չկա պահանջկոտ, նորարարական արվեստը գնահատող հանդիսատես»,- ասաց նա:

Մոսկվայի Փարաջանովի անվան թատրոնի առաջին հյուրախաղերը Հայաստանում 2009-ին էին, թատրոնի ղեկավարի խոսքով՝ ուշ ներկայանալու պատճառը հովանավորների բացակայությունն է, որն այս անգամ բարեհաջող լուծվել է:

**Task 2: Write an article commenting on Sergey Parajanov's Art using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 4

### Glossary

հազվագյուտ	rare
ձեռագիր	manuscript
տպագիր	printed books
հետազոտող	researcher
մասնագիտանալ ուսումնասիրությամբ	to investigate studies
աննախադեպ	unprecedented
թվագրվող	dating back
այցելուների առաջ դռները բացել	to open doors in front of visitors
հարուստ հավաքածու	rich collection
արքեպիսկոպոս	archbishop

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Օքսֆորդի համալսարանի գրադարանի հայկական ցուցադրությունը ապշեցուցիչ թվով այցելուներ է գրանցել**

Օքսֆորդի համալսարանի Բողլեյան գրադարանի՝ հայկական հազվագյուտ ձեռագրերի և տպագիր գրականության ցուցադրությունն ապշեցուցիչ թվով այցելուներ է ունեցել: Այս մասին նշում է Օքսֆորդի համալսարանի հետազոտող, պատմական լեզուների դոկտոր Ռոբին Մեյերը, ով մասնագիտանում է հունարենի, լատիներենի և հայերենի ուսումնասիրությամբ:

Աշխարհի համալսարանական գրադարանների շարքում մեծագույններից ու հնագույններից մեկը համարվող Բողլեյան գրադարանն առաջին անգամ աննախադեպ ցուցադրությամբ հանրությանն է ներկայացրել հայկական ձեռագրերի, տպագիր գրականության, հայկական համայնքի կիրառական արվեստի և հոգևոր իրերի 100-ից ավելի նմուշ,

այդ թվում՝ 17-րդ դարով թվագրվող ձեռագիրը (1638 թ.): Յուցադրությունն այցելուների առաջ իր դռներն է բացել հոկտեմբերի 23-ից:

Բողլեյան գրադարանը Եվրոպայի ամենահին գրադարաններից է, իսկ Սիացյալ Թագավորությունում, Բրիտանական գրադարանից հետո, մեծությամբ երկրորդն է՝ իր 11 միլիոն նմուշով: Օքսֆորդի համալսարանի գրադարանը գլխավորապես գործում է որպես գրադարան-ընթերցասրահ, և այնտեղ պահվող փաստաթղթերը հիմնականում չեն կարող դուրս հանվել ընթերցասենյակներից: Գրադարանն ունի հայերեն ձեռագրերի և գրքերի բավական հարուստ հավաքածու: Յուցակներում պահպանված նմուշների համաձայն՝ գրադարանն առաջին հայերեն ձեռագիրը ստացել է 1635 թ. արքեպիսկոպոս Լատդի կողմից:

**Task 2: Make a report about an art exhibition using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 5

### Glossary

մատուցել	to offer
Բելգիայի կաթոլիկ համալսարանի սիմֆոնիկ նվագախումբ	symphony orchestra of a Belgian Catholic University
բացօթյա ելույթ ունենալ	stage an outdoor performance
անակնկալ մատուցել	to take by surprise
համախմբել	to bring together
համերգին ներկա լինել	attend the concert
երևանցի	Yerevanian

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Փորձից հետո. բելգիացի երաժիշտներն անակնկալ համերգ են մատուցել երևանցիներին**

Երևանում փողոցային երաժիշտներն ամենուր են: Քաղաքի կենտրոնական մասերում, գետնանցումներում կամ պարզապես մայթերին նվագելով իրենց ապրուստը վաստակող մարդկանց երկացանկը բազմաժանր է՝ քաղաքային ֆուլկորից մինչև ռոք, դիոլից մինչև էլեկտրական կիթառ: Երևանը կարծես սովորել է նրանց, ոմանց անգամ անուններով գիտեն:

Երկուշաբթի երեկոյան Ազատության հրապարակում բելգիացի երաժիշտների ջութակի հնչյունները ստիպել էին բազմաթիվ քաղաքացիների մի պահ կանգ առնելու և վայելելու Բախի, Չայկովսկու, Հոմբերդինգի, Վաչե Շարաֆյանի դասական գործերը:

Համերգային ծրագրով Երևան ժամանած Բելգիայի կաթոլիկ համալսարանի սիմֆոնիկ նվագախմբի մեկ տասնյակ ջութակահարները որոշել էին երկարատև, վեցժամյա փորձից հետո անակնկալ մատուցել և բացօթյա ելույթ ունենալ:

Նվագախմբի ջութակահար Ասքրիդ Հելինգզը «ԱրմենիաՆաուի» հետ զրույցում ասել է, որ իրենց նվագախումբը ներկայացնում են 50-ից ավելի երաժիշտներ տարբեր գործիքներով, որոնցից միայն տասն են հրապարակում:

«Բավականին հոգնած էինք փորձերից հետո, բայց որոշեցինք անակնկալ մատուցել, քանի որ համերգին շատերը չեն կարողանա ներկա լինել, և չգոջացինք. մարդիկ ամեն ելույթից հետո ծափողջույններով իրենց հիացմունքն էին արտահայտում», - ասել է նա:

Բելգիայի կաթոլիկ համալսարանի սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներին, ովքեր համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանող են՝ ինժեներ, բժիշկ, տնտեսագետ համախմբում է սերը երաժշտության նկատմամբ: Նվագախումբը ելույթ կունենա նոյեմբերի 5-ին և 6-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

**Task 2: Write a news report about an open air concert in Yerevan using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 6

### Glossary

թատերաշրջան	theatrical season
ներկայացում	performance
տիկնիկային թատրոն	Puppet Theatre
թատերական պրեմիերա	theatrical premiere
խաղալ	to star
կաբարե թատրոն	cabaret theatre
հանդիսատես	audience
քաղաքակրթության պակաս	lack of civilization
մշակել	to cultivate
անտեսել մշակութային կրթությունը	ignore the cultural education

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Տիկնիկային թատրոն. առաջիկա պրեմիերաները նախատեսված են թե՛ երեխաների և թե՛ մեծահասակների համար**

Թեև հայկական թատրոնը բազմաթիվ խնդիրներ ունի, այդ թվում՝ նաև ֆինանսական, առաջիկա թատերաշրջանն առանց նոր ներկայացումների չի անցնելու, օրինակ՝ տիկնիկային թատրոնում այս տարի թատերական պրեմիերաներ են լինելու թե՛ մեծահասակների, թե՛ վոքրերի համար:

«Հիմա աշխատում ենք մեծահասակների համար Գոգոլի «Վիուկը», ինչպես նաև Դարիո Ֆոլի «Ազատ գույգ» դրամատիկ ներկայացումների վրա, որտեղ խաղալու են Նարինե Գրիգորյանը և Մերգեյ Թովմասյանը: Ներկայացումը լինելու է մի քիչ կաբարե թատրոնի սկզբունքով, հանդիսատեսն իրեն կզգա կաբարե թատրոնի շրջանակներում», - ուրբաթ՝

թատրոնի միջազգային օրը, լրագրողների հետ հանդիպմանն ասաց տիկնիկայինի գեղարվեստական ղեկավար, տնօրեն Ռուբեն Բաբայանը:

Թատրոնում այս տարի նախատեսում են աշխատել նաև Ադասի Այվազյանի մի հեքիաթի և Հանս Քրիստիան Անդերսենի «Մատնաչափիկը» հեքիաթի բեմականացման վրա:

Անդրադառնալով Հայաստանում մշակույթի հանդեպ վերաբերմունքին՝ Բաբայանը նշեց, որ թատրոնը սիրելու և գնահատելու համար պետք է ունենալ քաղաքակրթություն, մինչդեռ հայ հասարակությունն ունի դրա պակասը:

«Մշակույթն անոթն է, և, որպեսզի արյունը սնուցի ամբողջ օրգանիզմը, այդ անոթները պետք է բաց լինեն: Երբ ստածում ենք, թե ի՞նչ հասարակություն ենք ուզում ունենալ, ի՞նչ երկրում ենք ուզում ապրել և ի՞նչ երկիր կարող է միայն ապահովել առաջընթաց, հասկանում ենք, որ դա միայն ու միայն այն երկիրն է, որտեղ ապրում են քաղաքակիրթ մարդիկ», - նշեց Բաբայանը:

«Քաղաքակրթությունը պետք է բոլոր ոլորտներում, և այդ քաղաքակրթության պակասը մենք մշտապես զգում ենք: Մշակույթը շատ լավ բառ է, դրա արմատը «մշակ» բառն է, մշակելը երկար պրոցես է, զարմանը պետք է մշակել, ամբողջ ամռանը հետևել, որպեսզի աշմանն ունենալ համապատասխան արդյունք: Սա վերաբերում է երեխաներին՝ մենք այսօր անտեսում ենք մշակութային կրթությունը, վաղը ստանալու ենք ցավալի արդյունքներ», - հավելեց արվեստագետը:

**Task 2: Write an interview with the director of the Puppet Theatre using the active vocabulary provided in the glossary.**

## Render the Texts into English

### Text A

#### **Չորավար Անդրանիկի ձեռագրերը հանձնվեցին Հայաստանի պատմության պետական թանգարանին**

Հայաստանի պատմության պետական թանգարանում ապրիլի 22-ին տեղի ունեցավ հայ ազատագրական շարժման խորհրդանիշներից մեկի՝ Անդրանիկ Օզանյանի ձեռագրերի բնօրինակների հանձնման հանդիսավոր արարողությունը: Ձեռագրերը թանգարանին հանձնեց բրիտանահայ դոկտոր Հրաչ Կոյունջյանը:

Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն Անելկա Գրիգորյանը թանգարանի անունից իր երախտագիտությունը հայտնեց պարոն Կոյունջյանին և ապա, անդրադառնալով թանգարանին հանձնված ձեռագրերի կարևորությանը, ասաց. «Թանգարանն իր էությանը շատ անհագուրդ ու ազահ երևույթ է, և ամեն մի նորամուտ առարկանրա համար մեծ ձեռքբերում է, բայց կան ձեռքբերումներ, որոնք ամենասերտ առնչությունն ունեն տվյալ ժողովրդի պատմությանը: Անդրանիկ Չորավարի մասունքները՝ մարտական սուրը, պարզևները և այլն, մենք ունենք թանգարանում, բայց կա մի բան, որը մարդու մասին խոսում է ավելին, քան իրեն պատկանող իրը, դա նրա ձեռագիրն է»:

Հրաչ Կոյունջյանն էլ պատմեց, թե ինչպես են ձեռագրերը հայտնվել իր ձեռքում:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ներսես Տեր Վարդանյանը, որը մույնպես ներկա էր ձեռագրերի հանձնման հանդիսավոր արարողությանը, խորհրդանշական համարեց դրանց անցած ճանապարհը. «Հետաքրքիր է, որ այս ձեռագիրն իր անցած ճանապարհով, ճակատագրով անչափ նման է մեր ազգի զավակներին, որոնք, աշխարհով մեկ շրջելով, ի վերջո վերադառնում են Հայաստան: Միացյալ Թագավորությունից Ֆրանսիա, ապա՝ Լիբանան, Հունաստան, Անգլիա և, ի վերջո, Հայաստան գալը շատ խորհրդանշական է մեզ համար», - ասաց նա:

Այնուհետև Մշակույթի նաղարարի տեղակալը ՀՀ մշակույթի նախարարության կողմից Հրաչ Կոյունջյանին պարգևատրեց «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով և պատվոգրով:



## Text B

### Հասարակության մեջ լեզվի նահանջ է դիտվում

Վերջերս ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում «Հայոց լեզուն հեռուստատեսությամբ» խորագրով քննարկում էր կազմակերպվել:

Լավրենտի Հովհաննիսյանը նույնպես ընդգծեց գրական լեզվի զարգացման, պահպանման գործում հեռուստատեսության անուրանալի դերը: Նրա համար մտահոգիչ է այն, որ հայկական հեռուստատարադրանքը դիտում են նաև Սփյուռքում, և այնտեղ հեռուստալսարանն անհամեմատ մեծ է, քան մեր երկրում:

Այդ առումով Լավրենտի Հովհաննիսյանը ոչ այնքան հաղորդավարների ու լրագրողների խոսքն է վտանգավոր համարում, որքան ցուցադրվող հայկական արտադրության սերիալները և այն գողական շրջապատը, որն առկա է այդ սերիալներում:

Անդրադառնալով ժամանակակից հումորային հաղորդումներին՝ Լ. Հովհաննիսյանը քննդատեց այդ հաղորդումներին կյանք տվող հեղինակներին ու դերասաններին, որոնց կարծիքով գրական լեզվով չի կարելի հումոր անել, այլ միայն ժարգոնով ու գռեհկաբանությամբ:

«Ես դիտում եմ Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի ներկայացումները ու հասկանում, որ գրական լեզվով կարելի է ընտիր հումոր անել: Այդ դեպքում ինչն<sup>օ</sup> է մեր հեռուստատեսությունը խուսափում դրանից: Այդ գործով զբաղվողները պետք է հարգեն հայ հանդիսատեսին, եթե իրենք իրենց չեն հարգում: Անգամ ռուսական ալիքներով չկա լեզվի նման մատուցում: Կարծում եք ռուսները գողական լեզու չունեն: Իհարկե ունեն, բայց իրենց թույլ չեն տալիս այդ լեզվով ներկայանալ թե՛ տեղական և թե՛ միջազգային հանրությանը: Դա նաև հարված է սեփական արժանապատվությանը: Նման դրսևորումները փոխում են ժողովրդի լեզվամտածողությունը: Դրան է հակավոր ուշադրություն դարձնել», - իր խոսքը եզրափակեց Լավրենտի Հովհաննիսյանը:

**PART III**  
**MEDICINE**

**Unit 1**

**Glossary**

մտահոգիչ օրինաչափություն	alarming pattern
գրանցվել	to be registered
սննդային թունավորումներ	food poisoning
կանխարգելող միջոցներ	preventive measures
փորլուծություն	diarrhea
բարձր ջերմություն	fever
վսխում	vomiting
թուլություն	fatigue
անհատ ձեռներեց (ԱՁ)	entrepreneur
աղիքային ինֆեկցիա	intestinal infection
ամբուլատոր հսկողության տակ գտնվել	be under ambulatory control
հասարակական կազմակերպություն (հկ)	Non-Governmental Organization (NGO)
ստուգայց	spot check
մարդկային գործոն	human factor
մաշված ջրատարներ	wear and tear of pipes
Սննդի ապահովության պետական ծառայություն (ՍԱՊԾ)	State Service for Food Safety
տեղական ինքնակառավարման մարմիններ	local authorities

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Մտահոգիչ օրինաչափություն. Հայաստանում այս տարի արձանագրվել է սննդային թունավորումների դեպքերի աճ**

Վերջին հինգ ամիսներին Հայաստանում գրանցված սննդային թունավորումների դեպքերն ավելանում են, բայց դրանք կանխարգելող միջոցները այնքան էլ արդյունավետ չեն: Սննդի թունավորման համատարած դեպքերը սկսվեցին այս տարվա մայիսին, երբ Արմավիր քաղաքի երկու մանկապարտեզներից հոսպիտալացվեցին մոտ մեկ տասնյակ երեխաներ՝ փորլուծության, բարձր ջերմության, փսխման և ընդհանուր թուլության ախտանշաններով: Առողջապահության նախարարության հայտարարության մեջ ասվում էր, որ պատճառն անորակ սնունդն ու աղտոտված տարածքն էր:

Չանգվածային թունավորման մեկ այլ դեպք գրանցվեց մոտ մեկ շաբաթ առաջ Արարատի մարզի Բաղրամյան և Այգեգարդ գյուղերում, երբ հաղորդում ստացվեց, որ դպրոցներից «սննդային թունավորում» ախտորոշմամբ հիվանդանոց է ընդունվել 48 երեխա: Դեպքի առթիվ կատարված քննության արդյունքում պարզվեց, որ երկու գյուղերում էլ թունավորման պատճառն աշակերտների գնած հոթ դոգերն ու կարտոֆիլով կարկանդակներն են, որոնք մատակարարում է միևնույն ընկերությունը:

Բաղրամյանի գյուղապետարանը պնդում է, որ դպրոցականները թունավորվել են սնունդ մատակարարող «Մարգայան Գոհար» ԱԶ-ի արտադրած հացաբուլկեղենից, որի մեջ աղի փոխարեն շաքարավազ է եղել:

Սննդի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ) աշխատակիցներին, սակայն, քիչ հավանական է թվում այս պատճառաբանությունը: Նույն ժամանակահատվածում Արագածոտնի մարզի 9 համայնքներից հոսպիտալացվել է 25 երեխա: Ըստ նախնական վարկածի՝ աղիքային ինֆեկցիայի պատճառը խմելու ջուրն է:

Շիրակի մարզը նույնպես անմասն չէ սննդային թունավորումներից: Վերջերս հաղորդվեց այն մասին, որ Չիթհանք գյուղի երկու դպրոցահա-

սակ երեխաներ հոսպիտալացվել են Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց: Միաժամանակ հայտնաբերվել է աղիքային վարակյին բնորոշ գանգատներով ևս 28 հիվանդ, որոնք գտնվում են ամբուլատոր հսկողության տակ:

Հաճախակի գրանցվող թունավորումների դեպքերին անդրադառնալով՝ «Սպառողների խորհրդատվական կենտրոն» ՀԿ նախագահ Կարեն Զիլինգարյանը կարծում է, որ պատճառը կամ ՍԱՊԾ-ի անլուրջ մոտեցումն է խնդրին, կամ էլ համապատասխան լծակներ չունենալը:

«Ցանկացած ժամանակ տեսուչը ստուգայց կատարելու նպատակով պետք է հնարավորություն ունենա մտնել տվյալ օբյեկտ:

Եթե տնտեսավարողները մի քանի անգամ պատժվեն, ավելի զգոն կլինեն և ավելի կզգաստանան: Կոծկում են պատճառը: Այսքան դեպքեր հայտնաբերվեցին, մի՞թե մեր լաբորատորիաները չեն կարող հայտնաբերել, պետք է զբաղվել և բացահայտել պատճառները»:

Կ. Զիլինգարյանն ավելացրեց նաև, որ համակարգի հետ կապված խնդիր կա, այցելությունների ժամանակ պետք է հրավիրվեն ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր ինֆեկցիոնիստ Արա Ասոյանը իրավիճակի վերաբերյալ սեփական կարծիքն ունի: Նրա պնդմամբ՝ թունավորումների դեպքեր կան, որոնք մարդկային գործոնի հետևանք են, և դեպքեր, որտեղ չկա մարդկային գործոն:

«Կան թունավորումների դեպքեր, օրինակ՝ Շիրակի մարզում, երբ գործ ունենք ջրատարների մաշվածության հետ: Այդտեղ պատասխանատվությունը տեղական ինքնակառավարման մարմինների վրա է», - ասաց Արա Ասոյանը:

Ասոյանը նշեց, որ այս տարի թունավորումների դեպքերը նախորդ տարվա համեմատ շատ են եղել, միաժամանակ հավելելով, որ այս տարի շոգերն էլ են աննախադեպ եղել:

**Task 2: Write an interview with the Minister of Healthcare using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 2

### Glossary

տոքսիկ շոկ	toxic shock
առողջապահության նախարարության պաշտոնական կայք	Ministry of Health's official website
դեղորայքային ապահովվածության մակարդակ	the level of the supply of medicines
առողջապահության ոլորտի պատասխանատուներ	healthcare officials
բուժանձնակազմ	hospital staff
ինֆեկցիոն բաժանմունք	infectious diseases unit
բուժում	treatment
ռեանիմատոլոգի մշտական հերթապահություն	permanent position of a reanimatologist
սուր աղիքային վարակ	acute intestinal disease
հակասանիտարական վիճակ	poor sanitation
վարակի աղբյուր հանդիսանալ	to be blamed for outbreaks

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Նախարարն այցելել է Արմավիրի հիվանդանոց սուր աղիքային ինֆեկցայից աղջնակի մահից հետո**

Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը չորեքշաբթի այցելել է Արմավիրի մարզի բժշկական կենտրոն և հետաքրքրվել ինֆեկցիոն բաժանմունքում բուժում ստացող երեխաների առողջական վիճակով:

Արմավիրի բժշկական կենտրոն պաշտոնյան այցելել էր այն բանից

հետո, երբ հաղորդում էր ստացվել մեկ օր առաջ այդ բուժաստատությունում չորս տարեկան աղջնակի մահվան մասին:

Աղջնակ Ջրաշեն գյուղից էր և հիվանդանոց էր ընդունվել ջերմություն, թուլություն, փսխում, լուծ ախտանշաններով: Բժիշկների խոսքով՝ փոքրիկը մահացել է տոքսիկ շոկից:

Ըստ Հայաստանի առողջապահության նախարարության պաշտոնական կայքի՝ այցի ընթացքում նախարարը Մուրադյանը հետաքրքրվել է Արմավիրի բժշկական կենտրոնում երեխաների բուժման մանրամասներով, դեղորայքային ապահովվածությամբ: Նա նաև գրուցել է երեխաների և երեխաների ծնողների հետ:

Այնուհետև նախարարը Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի, մարզի առողջապահության ոլորտի պատասխանատուների և բուժանձնակազմի մասնակցությամբ խորհրդակցություն է անցկացրել, որի ընթացքում քննարկվել են Արմավիրի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքում գտնվող երեխաների բուժման ընթացքին վերաբերող մի շարք կազմակերպական հարցեր:

Նախարար Մուրադյանը հանձնարարել է բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքում սահմանել մանկական ռեանիմատոլոգի մշտական հերթապահություն՝ սուր աղիքային վարակի դեպքում անհրաժեշտ բուժօգնությունն արագ կազմակերպելու նպատակով:

Արմավիրում ինֆեկցիոն հիվանդությունների առումով իրավիճակը հատկապես մտահոգիչ է մայիսից ի վեր, երբ տեղի երեք մանկապարտեզ հաճախող ավելի քան երկու տասնյակ երեխաներ սուր աղիքային վարակով տեղափոխվել էին հիվանդանոց: Վարակի աղբյուր էին հանդիսացել անորակ սնունդը և հակասանիտարական վիճակը:

**Task 2: Write a report about an epidemic outbreak using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 3

### Glossary

կրծքով կերակրել	breastfeeding
ուժի մեջ մտնել	to come into force
սահմանել բուժաշխատողների պարտավորությունները	to define the responsibilities of medical staff
արհեստական սնուցման վտանգներ	dangers of artificial nourishing
հավելյալ սնունդ	additional nutrition
քայլեր ձեռնարկել	to take up measures
պատասխանատվության ենթարկել	to bring smb to charge
գումարային տուգանքի տեսքով	in the form of monetary fines
կաթնախառնուրդ արտադրող ընկերություններ	companies producing milk mixes
հակացուցված լինել	to be contradicted
կրծքով կերակրվող երեխա	breast-fed infants
ուժեղալ ամուր իմունիտետ	to have a strong immune system

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Մայրական կաթը ընդդեմ մանկական սննդի. նոր օրենքը խրախուսում է Հայաստանում կրծքով կերակրելը**

Այսուհետ կրծքով կերակրելը Հայաստանում ոչ միայն մայրերի նախընտրությամբ ու հասարակության պահանջով է խրախուսվելու, այլև պաշտպանվելու է մարտի 1-ից ուժի մեջ մտած «Երեխաների կրծքով սնուցման կարգավորման և մանկական սննդի շրջանառության մասին» օրենքով:

«Բոլորս գիտենք, թե կրծքով սնուցումը որքան կարևոր է մայրիկի ու երեխայի առողջության համար, երբեմն էլ՝ հայրիկի գրպանի համար:

Հայ մայրերի մեծ մասը ձգտում է կրծքով կերակրելու նորածիններին, բայց երբեմն սխալ տեղեկացվածության կամ չխրախուսման պայմաններում հաջողության չի հասնում կրծքով կերակրման հարցում»,- հինգշաբթի լրագրողներին ասել է Երևանի պետական բժշկական համալսարանի մանկաբուժության թիվ 1 ամբիոնի դասախոս Սուսաննա Հարությունյանը:

Նոր ընդունված օրենքը ոչ միայն սահմանում է երեխայի և մոր իրավունքները, այլև բուժաշխատողների պարտավորությունները:

«Բուժաշխատողները պետք է հղիներին ու երիտասարդ մայրերին տեղյակ պահեն կրծքով կերակրելու առավելությունների, արհեստական սնուցման վտանգների, ինչպես նաև հավելյալ սննդի տրման կարգի մասին: Սա պետք է անաչառ կերպով կատարվի»,- ասել է Հարությունյանը, ով նաև «Վստահություն» առողջապահական ՀԿ նախագահն է:

Մինչդեռ, ըստ մասնագետի ունեցած տվյալների, երևանյան գրեթե բոլոր ծննդատներում կաթնախառնուրդ արտադրող կազմակերպություններն անվճար բաժանում են իրենց ապրանքը, խրախուսում են բուժաշխատողներին նորածինների մայրերին կաթնախառնուրդ առաջարկել:

«Սովորաբար, կրծքով սնուցմանն աջակցող գործողությունը չի իրականացվում: Շատ հաճախ կաթնախառնուրդ առաջարկում են ոչ թե այն պատճառով, որ երեխան դժվարություններ ունի, այլ որ ասում են՝ եթե չտաս, երեխան քաշը կկորցնի»,- նշել է Հարությունյանը:

Թեպետ նրա ղեկավարած կազմակերպությունում գիտեն, թե որ հիվանդանոցը կաթնախառնուրդ արտադրող կամ ներմուծող ո՞ր ընկերության հետ է համագործակցում, բայց փաստեր չունեն ու դեռ չեն կարող պատասխանատվության ենթարկելու համար քայլեր ձեռնարկել:

«Օրենքն իր հերթին կպայքարի այս երևույթի դեմ, քանի որ երբ հայտնաբերվեն նման դեպքեր, նախ՝ պատժամիջոցներ կկիրառվեն՝ գումարային տուգանքի տեսքով, իսկ հետո արդեն երկուստեք կարող են գրկվել նաև լիցենզիայից»,- ասել է Հարությունյանը: Նոր օրենքը սահմանում է կրծքով կերակրող և աշխատող մայրերի իրավունքները՝ մեկ ժամ ավելի ընդմիջում, մեկ ժամ շուտ տուն գնալ, հավելյալ արձակուրդային օրեր ունենալ, իսկ գործատուին պարտադրում է երեխային մոր



մոտ բերելու և կերակրելու անհրաժեշտության դեպքում տարածք ունենալ:

«Կարծում եմ՝ առաջին հերթին պետք է բուժաշխատողներին ծանոթացնել օրենքի դրույթներին, որից հետո միայն անցնել պատժամիջոցների կիրառմանը: Օրենքի համաձայն՝ բուժաշխատողի պարտականությունների մեջ է մտնում հղիներին տեղեկատվություն տրամադրելը, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ արհեստական կերերի օգտագործումը, և որքան օգտակար է մոր և մանկան համար կրծքով սնուցումը: Կաթնախառնուրդ արտադրող ընկերություններին էլ արգելվում է միջամտել, գովազդել իրենց ապրանքը հիվանդանոցներում՝ ծննդկան կանանց մոտ», - նշել է մասնագետը՝ հավելելով, որ ծնողներն էլ պետք է իրազեկ լինեն իրենց իրավունքներից և կրծքով կերակրելուց հրաժարվեն միայն այն դեպքում, երբ դա հակացուցված է երեխային կամ ծնողին:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ կրծքի կաթով կերակրվող երեխաներն արհեստական սնունդ ստացող երեխաների համեմատությամբ ավելի արագ են զարգանում և ամրացնում իմունիտետը:

**Task 2: Write an essay about the advantages of the breastfeeding using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 4

### Glossary

քննարկել օրենքի նախագիծ	to discuss the bill
հավաստագրման համակարգ	system of accreditation
հին և արդեն իրեն չարդարցնող	old and already failed
օրենք ընդունել	to adopt a law
սպառողի գնահատականը առարարկվող համակարգին	consumer's evaluation toward the provided services
նվազագույն շեմ	a minimum threshold
ավագ բուժաշխատող	senior health provider
ընդհանուր պատկեր ստանալ	to receive an overall image
բուժում ստանալ ամբուլատոր պայմաններում	receive treatment in outpatient conditions
վճարունակ քաղաքացի	solvent citizen
երիտասարդացման միտում	tendency “to become younger”
բժիշկների դեֆիցիտ	deficit of good specialists
հակաուռուցքային ազգային ծրագիր մշակել	to develop a national anti-cancer program

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Նոր հավաստագրում. հայ օրենսդիրները քննարկում են հանրային առողջապահական խնդիրներ**

Այս շաբաթ խորհրդարանը քննարկում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում է բուժաշխատողների մասնագիտական հմտությունների և ունակություն-

ների շարունակական զարգացումը և մասնագիտական գործունեությունը իրականացնելու թույլատվությունն ապահովելու նպատակով ներդնել բուժաշխատողների հավաստագրման համակարգ:

Առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը հայտարարել է, որ հնացած և արդեն իրեն չարդարացնող համակարգն այսօր փոփոխության կարիք ունի:

Ընդդիմանալով առաջարկվող նախագծին՝ ՀԱԿ խմբակցության պատգամավոր Հրանտ Բագրատյանը, դիմելով առողջապահության նախարարին, հարցրել է, արդյո՞ք ճիշտ է մնան օրենքի ընդունումը, որով որոշելու են բժշկի որակավորումը, սերտիֆիկատ են սահմանելու:

«Բա ո՞ր մնաց շուկան: Ի՞նչ դեր պետք է խաղա և ի՞նչ կոնկրետ մեխանիզմներով պետք է գնահատի սպառողը մատուցված բժշկական ծառայության որակի փաստումը: Այս օրենքով դա ինչպե՞ս է արտահայտվում», - հարց է բարձրացրել Բագրատյանը:

Նախարարը նշել է՝ անշուշտ, սպառողի կարծիքը կարևոր է բուժման որակը գնահատելու համար, բայց կա նվազագույն շեմ, որը պետք է ապահովի պետությունը:

«Բազմաթիվ զարգացած երկրներում մնան օրենքը կիրառվում է շուրջ 50-60 տարի: Օրինակ՝ ավագ բուժաշխատողը պետք է ոչ միայն վերապատրաստված լինի, այլև դրան գուզահեռ՝ տիրապետի ինքնակրթական ծրագրերի, հմտությունների, որոնք թույլ են տալիս 5 տարվա ընթացքում ընդհանուր պատկեր ստանալ, որ տվյալ բժիշկն ինքնակրթված է, տիրապետում է վերջին տեսական նորամուծություններին, հմտություններին և ունենալով պետական հավաստագիրը՝ թույլ է տրվում բժշկական գործունեություն իրականացնել մեր երկրում», - ասել է նախարար Մուրադյանը:

Օրենքի փոփոխությանը՝ ավագ բուժաշխատողը պետք է հավաքի 220 կրեդիտային միավոր՝ վերապատրաստումների, գործուղումների, ինքնակրթության միջոցով: Միայն այդ պարագայում տվյալ բժշկին կթույլատրվի աշխատել համակարգում:

Օրենքի նախագծի քննարկման ժամանակ առողջապահության նախարարը նաև խոսել է Հայաստանում կառուցվող նոր ուռուցքաբանության ազգային կենտրոնի մասին, նշելով, որ ուռուցքաբանության

կենտրոնում տարեկան բուժում է ստանում շուրջ 11 հազար հիվանդ, իրականացվում 3000 վիրահատություն, 20 հազար հիվանդ բուժում է ստանում ամբուլատոր պայմաններում, ինչը նշանակում է, որ կենտրոնն արդիականացման կարիք ունի:

Դեմ արտահայտվելով նոր կենտրոնի կառուցմանը՝ ԲՀԿ խմբակցության ղեկավար Նաիրա Ջոհրաբյանը հայտարարել է, որ չկա քիչ թե շատ վճարունակ քաղաքացի, որ նման ծանր հիվանդության դեպքում իր առողջությունը վատահի այս ոլորտի մասնագետներին:

«Մենք կարող ենք ունենալ շենքային առումով լավագույն կենտրոնը, բայց չունենալ համապատասխան մասնագետներ, ի՞նչ պետք է անել, որ այն բարձր որակի ծառայություն մատուցող կենտրոն լինի», - ասել է Ջոհրաբյանը:

Նա նշել է, որ ըստ վիճակագրության՝ Հայաստանը բացառիկ երկրների թվում է, որտեղ քաղցկեղը երիտասարդացման միտում ունի, և գնալով մեծանում է քաղցկեղով հիվանդ երեխաների թիվը: ԲՀԿ խմբակցության ղեկավարն առաջարկել է նախարարին քաղցկեղի դեմ պայքարի ազգային ծրագիր մշակել, միաժամանակ հարց բարձրացնելով, թե որտե՞ղ են վերապատրաստվելու ուռուցքաբանության կենտրոնի մասնագետները, քանի որ այդ ոլորտում առկա է բժիշկների դեֆիցիտ:

Առողջապահության նախարարը նշել է, որ հակաուռուցքային ազգային ծրագիր է մշակվում, գուգահեռ իրականացվում են պետական այլ ծրագրեր, հիշեցնելով, որ հունվարի 1-ից Հայաստանում ներդրվել են սկրինինգային ծրագրերը:

**Task 2: Write a newspaper article using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 5

### Glossary

Առողջապահության նախարարություն (ԱՆ)	Ministry of Health (MOH)
վերարտադրողական առողջության ծրագրեր	reproductive health programs
ծնելիության աճը խթանող ծրագրեր	birthrate growth programs
մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ	the head of the Maternity and Reproductive Health Division
մանկական մահացությունների թիվը կրճատել և նվազեցնել անպտղության ցուցանիշները	to reduce the level of infant mortality and infertility
մանկական վերակենդանացման բաժանմունքների տեխնիկական հագեցվածություն	equipment for infant resuscitation units
ցածր քաշով նորածինների ապրեցում	the prevention of low-weight infants' deaths
անպտղության հաղթահարման ծրագրեր	infertility treatment programs
կրկնակի նվազում	a double decrease
առողջապահության ոլորտի ներկայացուցիչ	health official
սեռավարակների կանխարգելում	prevention of sexually transmitted infections
աբորտների իջեցման ծրագրեր	abortion reduction programs

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**ԱՆ. ծնելիության, վերարտադրողական առողջության ծրագրերն օգնում են ավելացնելու ծնունդների թիվը, նվազեցնելու մանկական մահացությունը**

Ծնելիության աճը խթանող ծրագրերը վերջին տարում նպաստել են, որ 2014-ին 1000-ով ավելացել է գրանցված ծնունդների թիվը, իսկ մանկական մահացության մակարդակը՝ նվազել: Այս մասին այսօր լրագրողներին ասաց ոլորտի ներկայացուցիչը:

ՀՀ առողջապահության նախարարության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյանի խոսքով՝ վերջին մի քանի տարիներին բազմաթիվ ծրագրեր են մշակվել և կյանքի կոչվել՝ երկրում ծնելիության աճի խթանման և վերարտադրողական առողջության բարելավման նպատակով:

«Մեր ռազմավարությունը երկու ուղղություն ունի՝ մանկական մահացությունների թիվը կրճատել և նվազեցնել անպտղության ցուցանիշները: Առաջինի դեպքում կյանքի ենք կոչել ցածր քաշով նորածինների ապրեցման, մանկական վերակենդանացման բաժանմունքների տեխնիկական հագեցվածության և երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրման ծրագրերը, որոնք դրական արդյունք են տվել՝ այս տարի մանկական մահացությունների թվի ցուցանիշը 10 պրոմիլեից ցածր է», - ասաց նա: Խոսելով անպտղության հաղթահարման ծրագրի մասին՝ Ավագյանը նկատեց, որ վերջին 10 տարում անցկացված միջոցառումների շնորհիվ ցուցանիշը կրկնակի նվազել է:

«2000-ին անցկացված առաջին հետազոտությունների տվյալները կանանց շրջանում ցույց էին տալիս 31,9 պրոմիլե անպտղության ցուցանիշ, որը բավականին մտահոգիչ էր: Իսկ 2010-ի հետազոտության տրվյալներով դրանց թիվը կտրուկ նվազել է՝ 16,8 պրոմիլե, արդեն 2014-ին ունենք 14,8 պրոմիլե անպտղության ցուցանիշ: Կարծում են՝ դրական աճը նկատելի է», - ասաց Գայանե Ավագյանը:

Ըստ ոլորտի ներկայացուցչի՝ միջոցառումների մեջ մտնում էին սե-

ռավարակների կանխարգելման, աբորտների իջեցման ծրագիրը, 15 տարեկան տղաների և աղջիկների համալիր հետազոտությունը, ախտաբանությունների հայտնաբերումը և բուժումը:

Եզրափակելով՝ Ավագյանը նշեց, որ վերջին տարում իրականացված ծրագրերի շնորհիվ տարեկան 45.000 ծնունդներից 1000-ը գրանցվել են անպտղությունը հաղթահարած գույգերի մոտ:

**Task 2: Write a newspaper article about healthcare programs using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 6

### Glossary

հավասարակշռված սննդակարգ	balanced diet
թերսնում	malnutrition
թերի	insufficient
սպիտակուցային/ածխաջրային սնունդ	protein/carbohydrate foods
ֆիզիկական/մտավոր խնդիրներ	physical/mental problems
սակավարյունություն	anemia
թերաճություն	stunted growth
հեմոգլոբինի քանակի տվյալներ	data quantity of hemoglobin
միջամտություն	intervention
հաշվարկված կալորիաներ	calculated calories
սննդակարգ	ration
արձանագրել	to register
կրծքով կերակրել	to breastfeed
արյան անալիզ	blood tests/analysis
երկաթ պարունակող դեղորայք	iron-containing medications

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Պայթար թերսնման դեմ. Հայաստանի մարզերում իրականացվում են երեխաների համար հավասարակշռված սննդակարգ ապահովելու ծրագրեր**

Հայաստանում երեխաների թերսնման խնդիրը, որը ձևավորվում է տարիների ընթացքում թերի սպիտակուցային սննդի պատճառով, փոխարինվելով ածխաջրային սննդով, առաջացնում է ֆիզիկական ու



մտավոր մի շարք խնդիրներ, որոնց դեմ շարունակաբար ծրագրեր են իրականացնում մի շարք կազմակերպություններ:

Ըստ 2010-ին անցկացված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի ուսումնասիրության արդյունքների (ուսումնասիրությունն անցկացվում է հինգ տարին մեկ)՝ Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ երեխան ունի թերսնման խնդիր, ինչի հետևանքով մինչև 5 տարեկան երեխաների 37 տոկոսը սակավարյունություն ունի, ինչը համարվում է բարձր ցուցանիշ:

Թերաճությունն առավել տարածված է գյուղաբնակ վայրերում:

«Մենք սկսեցինք ծրագիրը հետազոտություններից, ստացանք հեմոգլոբինի քանակի տվյալները երեխաների արյան մեջ, որից հետո անցանք միջամտությունների՝ արագ և երկարատև, ինչը նաև հավասարակշռված սննդի մատակարարումն էր Տավուշի մարզի 10 գյուղերի մանկապարտեզներին»,- բացատրում է Սիմոնյանը:

Կազմակերպությունը տարեկան 30 հազար դոլար է ծախսում մարզի 10 գյուղերի մանկապարտեզներում սննդի մատակարարումն ապահովելու համար, որից օգտվում են 300-ից ավելի երեխաներ: Նրանք ստանում են առողջապահության նախարարության և սննդամթերքի անվտանգության տեսչության հետ հաշվարկած կալորիաներով հավասարակշռված սննդամթերք, որի մեջ բացառվում են երշիկեղենը, նրբերշիկը, չիպսերը, տապակած ուտեստները:

Գյուղի մանկապարտեզի տնօրեն Մանուշակ Պապյանը նշում է. ծնողների սոցիալական անապահով վիճակը թույլ չի տալիս նրանց գնել այն սննդամթերքը, որը պետք է ներմուծված լինեն երեխայի սննդակարգում:

«Սակավարյունությունը շատ բարձր էր մեզ մոտ, արդեն 9 ամսականից փոքր երեխաների մոտ ցածր հեմոգլոբին էինք արձանագրում: Դառնում են 2-3 տարեկան, էլի հեմոգլոբինը ցածր է լինում, սա հիմնականում վատ ապրելու հետևանք է:», - ասում է Մարդանյանը: Այսպիսով, թերսնման պատճառներից մեկը մասնագետները կապում են աղքատության հետ:

Այս Մարդանյանն էլ թերսնման պատճառներից մեկը համարում է կրծքով չկերակրելը:

«Դասընթացներ ենք անցկացրել նաև մայրերի համար, ընդհանրապես կարողացել ենք մտածելակերպ փոխել: Հեմոգլոբինի խնդիր ունեցող երեխաներից ամեն ամիս կամ երկու ամիսը մեկ անգամ նորից արյան անալիզ ենք վերցնում, տրվում է նաև երկաթ պարունակող դեղորայք: Այս բոլոր բաղադրիչները միասին, աստիճանաբար նվազեցրել է սակավարյունություն ունեցողների երեխաների թիվը»,- ասում է նա:

**Task 2: Make a report about the problems of malnutrition using the active vocabulary provided in the glossary.**

### **Render the Texts into English**

#### **Text A**

#### **ԱՄՆ-ում հինգ պատանուց մեկն ունի թույլ լսողություն**

Վերջերս անցկացված ուսումնասիրության համաձայն, ԱՄՆ-ում ավելանում է լսողության խնդիրներ ունեցող պատանիների թիվը:

Ամերիկյան բժշկական ասոցիացիայի ամսագրում տպագրված ուսումնասիրության արդյունքների համաձայն, ԱՄՆ-ում ապրող հինգ պատանուց մեկը տառապում է լսողության տարբեր աստիճանի վնասվածքներից, ինչը տոկոսով գերազանցում է 15 տարի առաջ անցկացված ուսումնասիրության արդյունքները:

Հետազոտության համաձայն, ԱՄՆ-ում ապրող քսան պատանուց մեկը տառապում է լսողության լուրջ վնասվածքներից, ինչը կազմում է 50 տոկոսանոց աճ՝ նախորդ ուսումնասիրության համեմատ:

Ուսումնասիրության մեջ չի նշվում լսողության կորստի դեպքերի աճի պատճառը, իսկ պատանիները չէին նշել բարձր ձայների ազդեցության դեպքերի հաճախականության ավելացումը: Սակայն ուսումնասիրությունն անցկացնողների համաձայն, պատանիները հաճախ թերազնահատում են բարձր ձայնի ազդեցության ներքո գտնվելու դեպքերը:

Այլ ուսումնասիրությունների համաձայն, լսողության թուլացումը կապված է բջջային հեռախոսներով և սկանչակալներով բարձրաձայն երաժշտություն լսելու հետ:

## Text B

Ողջ աշխարհը մտահոգված է ավելորդ քաշի խնդրով: Երբեմն այնքան հնարամիտ լուծումներ են առաջարկվում, որ հարկ է կանգ առնել ու արժանին մատուցել մարդկային երևակայությանը:

Եթե այդ լուծումներն այնքան արդյունավետ լինեին, որքան հնարամիտ են, ավելորդ քաշը կանհետանար երկրագնդի վրայից, ինչպես ժամանակին՝ մամոնտները: Ամերիկան, որտեղ գիրությունը հորմոնային սննդի պատճառով առավել սուր հարց է, դիետաները փոխարինել է ներարկումներով: Մարդիկ ձգտում են հեշտ տարբերակների, այնինչ սննդակարգին հետևելը կամքի ուժ է պահանջում և ջանքեր: Եվ ահա, որոշ բժիշկներ առաջարկում են նիհարել հորմոնային ներարկումների միջոցով: Հղի կնոջ օրգանիզմում արտադրված հորմոններից մեկը, իբր, հալեցնում է ճարպը, ընդ որում՝ հենց մարմնի այն հատվածներում, որոնք դրա կարիքն ունեն՝ որովայնի, ազդրերի և այլն: Ամերիկացի կանայք հավատում են, որ հորմոնի և օրական հինգ հարյուր կալորիա պարունակող սննդակարգի համակցումը հիանալի արդյունք է ունենում՝ թույլ տալով կարճ ժամանակում քաշ կորցնել, և վկայակոչում են այս կերպ նիհարած իրենց ընկերուհիներին: Նիհարելու այս միջոցը մեծ ժողովրդականություն է վայելում, որովհետև վերոհիշյալ հորմոնի ներարկումները կարող են կատարվել միայն դեղատոմսերով:

Եվ գտնվում են բժիշկներ, ովքեր այդ դեղատոմսերը դուրս են գրում: Համապատասխան վճարի դիմաց՝ խորհրդատվությունը և մեկ ամսվա համար նախատեսված հորմոնն ու ներարկիչները հազար դոլլար արժեն: Այս խնդիրն այնպիսի հնչեղություն է ստացել, որ ԱՄՆ առողջապահության վարչությունն ստիպված է եղել ուսումնասիրել հորմոնի ազդեցությունն օրգանիզմի վրա և հրապարակել է եզրակացություն, ըստ որի՝ հորմոնը ոչ մի նիհարեցնող կամ ախորժակ փակող ազդեցություն չի գործում: Նախազգուշացված ամերիկացի կանայք, սակայն, շարունակում են հորմոնային որսը, քանի որ, որքան էլ զարմանալի է, գոյություն ունեն հորմոնն օգտագործելով խիստ նիհարած կանայք:

հորմոնային սնունդ – GM food

որովայն – abdomen, stomach

ազդր – thigh

**PART IV**  
**ENVIRONMENT AND ECOLOGY**

**Unit 1**

**Glossary**

անարդյունավետ օգտագործում	irrational use
ահազանգել	to warn
անդրադառնալ խնդրին	to address the problem
ջրի պակաս	water shortage
ինչ-որ մի բանի հաշվին	on the account of sth
կարգավորել	to regulate
ջրի կորուստ	water waste
անապատացման ռիսկ	a threat of desertification
կուտակել ջրամբարներում	to collect in dams
պետական հոգածության տակ լինել	to be under special care
բախտի քմահաճույքին թողնել	to leave to the will of fate

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Մտահոգություններ Սևանի շուրջ. բնապահպանները պահանջում են ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործել**

Բնապահպանները կրկին ահազանգում են, որ ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործումն զգալիորեն վնասում է Հայաստանի շրջակա միջավայրը:

«Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ նախագահ Կարինե Դանիելյանը չորեքշաբթի լրագրողների հետ հանդիպմանը, հերթական անգամ անդրադառնալով Սևանա լճից հավելյալ ջուր բաց թողնելու խնդրին, ասաց, որ Արարատյան դաշտավայրի արտեզյան ավազանում ջրի պակասի խնդիր կա, սակայն ակնհայտ սխալ է այդ խնդիրը Սևանի հաշվին լուծել:

«Արարատյան դաշտում շատ կարևոր է նաև ձկնաբուծարանների գործունեության կարգավորումը, քանի որ նորմալ չեն իզոլացվել, և ջրի կորուստ է լինում, հենց այդ շրջակայքում էլ ճահճացում է լինում, իսկ մյուս մասում աճում են անապատացման ռիսկերը: Ջուրը պետք է կրկնակի օգտագործվի, մինչև ձկնաբուծությունը զարգացնելը բոլոր պայմանները պետք է ուսումնասիրվեն», - ասաց Դանիելյանը:

«Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանն էլ ասում է, որ Հայաստանում հարկավոր է արդիականացնել գյուղատնտեսությունն այն առումով, որ ջրի խնայողությունը լինի ոչ թե վնասակար, այլ օգտավետ:

«Ջուրը սահմանափակ ռեսուրսների ցանկի մեջ է մտնում: Հայաստանը տարեկան ստանում է 7 մլրդ խորանարդ մետր ջուր, որից, Սևանը չհաշված, մենք ջրամբարներում կուտակում ենք 2-2,5 մլրդ, մնացածը գետերի հետ գնում է Կասպից ծով, դա կարելի է մեծ քանակությամբ կուտակել և օգտագործել, - ասում է Ադիբեկյանը՝ հավելելով, որ հարկավոր է ստեղծել համակարգված կառույց, որը պատասխանատու կլինի այդ ջրերի օգտագործման համար: - Աշխարհում գյուղատնտեսությունը պետական հոգածության տակ է, իսկ մեզ մոտ թողնված է բախտի քմահաճույքին, դրա համար էլ կառավարությունը ժամանակ առ ժամանակ հանդիպում է ճգնաժամային իրավիճակների, ու որոշվում է գոհաբերել կա՛մ Սևանի ջուրը, կա՛մ Արարատյան դաշտավայրում ապրողների բարեկեցությունը»:

**Task 2: Write an essay about the concerns over irrational water use using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 2

### Glossary

կենդանիների իրավունքների պաշտպաններ	animal rights champions
թվաքանակի ավելացում	increased reproduction
շների բազմացում	dog population
թափառող շների սպանո	carnage of stray dogs
կեսգիշերն անց	in the dead of the night
կենդանիների զանգվածային սպանո	a mass slaughter of animals
բազմանալ	to reproduce themselves
անխտիր	indiscriminately
վայրագ սպանո կատարել	to commit a savage slaughter
վնասազերծել	to neutralize
քնեցնել	to put down
շների կացարան	dog shelter
կենդանիների պաշտպան	animal rights advocate
պատասխանատվության են ենթարկվում	to be held responsible
մեկի հրամանով	upon instructions from sb
կրպակ	kiosk
ոչ ադեկվատ շներ	dogs behaving aggressively
վտանգ ներկայացնել	to pose danger to
կաղկանձ	howling
բաց թողնել	to release back

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Թափառող շներ. կենդանիների իրավունքների պաշտպաններն ասում են՝ շների բազմացումը չպետք է վերահսկվի նրանց սպանողով**

Կենդանիների իրավունքների պաշտպանները, անհանգստացած շների բազմացումը վերահսկելու նպատակով վերջերս Երևանում սկսված չորքոտանի բարեկամների սպանողով, զգուշացրել են, որ թափառող շների զանգվածային սպանողը բերում է նրանց ազդեցիվացման և թվաքանակի ավելացման:

Ըստ «Փրկենք կենդանիներին» ՀԿ տվյալների՝ բնակիչներից բազմաթիվ ահազանգեր են ստացվում Երևանի բակերում և փողոցներում կեպիշերն անց թափառող շների սպանող դադարեցնելու պահանջով:

«Թափառող շների խնդիրը լուծելու ավելի քաղաքակիրթ եղանակ կա, քան զանգվածային սպանող: Հորմոնային ճանապարհով ստերիլացնելուց հետո նրանք ավելի անվնաս են դառնում, այլևս կուտակվելու, խմբով շրջելու, ինչպես նաև բազմանալու խնդիր առաջ չի գալիս», - ասում է բարեգործական ՀԿ նախագահ Նունե Մեհրաբյանը:

Ստերիլացված շները լինում են կարմիր կամ կանաչ վզակապով: Ըստ Մեհրաբյանի՝ այսօր Երևանում դժվար է տեսնել նման վզակապերով ստերիլացված շներ, որովհետև բոլորն անխտիր սպանվում են:

«Դրա համար պատասխանատու է միայն Երևանի քաղաքապետարանը, որը տարեկան 180 մլն դրամ (մոտ 460 հազար դոլար) է ստանում իբր ստերիլացման համար: Սակայն իրականում կատարվում է շների վայրագ սպանո՞ղ,- ասում է Մեհրաբյանը:

«Յունիգրաֆ իքս» ՍՊԸ-ն 2006-ից Երևանի վարչական տարածքում կատարում է թափառող շների ստերիլացում, իսկ 2008-ից նաև՝ վնասազերծում (քնեցման եղանակով): Ընկերության տեղեկատվության հարցերով պատասխանատու Լիլիթ Գրիգորյանը նշում է, որ քաղաքապետարանից իրենց տրամադրվող 180 մլն դրամի 120 մլն դրամը (մոտ 307 հազար դոլար) օգտագործվում է ստերիլացման, 60 մլն դրամը (մոտ 153 հազար դոլար)՝ վնասազերծման համար: Տարեսկզբից մինչև

2012-ի մարտի 1-ը ստերիլացվել է 920 թափառող շուն, վնասագերծվել՝ 4200-ը:

Երևանի Արիմբերդի փողոցում է գտնվում շների միակ կացարանը, որը ստեղծվել է Նունե Մեհրաբյանի և նրա կենդանասեր ընկերների միջոցով: Այսօր այստեղ կա շուրջ 250 շուն, որոնք ստանում են համապատասխան խնամք և անհրաժեշտ պատվաստումներ:

Կենդանիների պաշտպան Էլեն Բարսեղյանը նշում է, որ իրենք հաճախ բուժում և կյանքի են կոչում շներին, որոնք վիրավորվել են սպանդի ժամանակ:

«Եվրոպական քաղաքակիրթ երկրներում նույնիսկ շուն որդեգրած անձինք մեծ պատասխանատվության են ենթարկվում՝ մինչև 30 հազար եվրոյի չափով: Իսկ այստեղ ոստիկանները քաղաքապետարանի հրամանով կրակում են շների վրա ու մարդկանց զգուշացնում դուրս չգալ մոտակա կրպակներից կամ կառույցներից»,- ասում է Բարսեղյանը:

«Ոչ ադեկվատ շներին պետք է պարզապես կացարաններում պահել, որպեսզի հանրության համար վտանգ չներկայացնեն, այլ ոչ թե սպանեն, շների կադկանձը տարածեն բակերում, ինչից շատ մարդիկ նույնիսկ սթրեսի մեջ են ընկնում»,- ասում է Մեհրաբյանը:

Անասնաբույժ Արման Էլբակյանը, որը նույնպես կողմ է թափառող շների ստերիլացմանը՝ որպես նրանց բազմացումը վերահսկելու լավագույն միջոցի, ասում է, որ ստերիլացնելուց հետո քաղաքում նրանց բաց թողնելը ոչ մի վտանգ չի ներկայացնում հանրության համար:

**Task 2: Write a newspaper article about the animal rights protection using the active vocabulary provided in the glossary.**



## Unit 3

### Glossary

մրցունակություն	competitiveness
ներդրում	investment
դիրքը բարելավել	to improve position
դրական ազդեցություն ունենալ	to have a positive impact
Էկոնոմիկայի նախարար	Minister of Economy
մակրոտնտեսական միջավայր	macroeconomic environment
տարրական կրթություն	elementary education
բարձրագույն կրթություն	higher education
վերապատրաստում	training
աշխատուժի շուկա	labour market
ենթակառուցվածք	infrastructure
տեխնոլոգիական պատրաստվածություն	technological readiness
ազդեցություն ունենալ	to have impact on

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

#### **Գլոբալ մրցունակության և Ինովացիոն զեկույցներում Հայաստանի առաջընթացը կնպաստի ներդրումային միջավայրի բարելավմանը**

Գլոբալ մրցունակության համաշխարհային զեկույցի 2015-2016 թթ. Արդյունքները, որոնց համաձայն՝ Հայաստանն իր դիրքը բարելավել է երեք կետով և զբաղեցնում է 82-րդ տեղը, դրական ազդեցություն կունենան մեր երկրի ներդրումային միջավայրի վրա:

Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Կարեն Ծճմարիտյանը: «Ընդ որում, նախորդ տարվա

համեմատ առաջընթաց է գրանցվել 7 հենասյունների գծով, մասնավորապես, մակրոտնտեսական միջավայրի, առողջապահության և տարրական կրթության, բարձրագույն կրթության և վերապատրաստման, սպրանքների, աշխատուժի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկաների զարգացման գծով: Որոշակի փոփոխություններ են եղել ինստիտուտների, ենթակառուցվածքների, տեխնոլոգիական պատրաստվածության և գործարարության կատարելագործվածության աստիճանով: Ըստ այդմ, Հայաստանը բարելավել է իր դիրքերը, ինչը հետագայում նաև որոշակի ազդեցություն կունենա ներդրումային միջավայրի վրա», - ասաց Ճշմարիտյանը: Ըստ նախարարի՝ սա բավականին լուրջ գնահատական է և լուրջ վերլուծությունների արդյունք:

**Task 2: Write an interview with the Minister of Economy about the economic situation in Armenia using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 4

### Glossary

ռռնացող խնդիր	howling problem
բնապահպան	environmentalist
ֆինանսապես խրախուսել	to provide financial encouragement
հատկացնել	to allocate
Էկոլոգիական հասարակական դաշինք	Public Ecological Alliance
միակողմանի նայել	to have a one-sided view
թվաքանակի դիտարկում	monitoring of the number
համատեղ աշխատանք	joint work
վտանգների մասին բարձրաձայնել	warn about the risks
ոչնչացման եզրին	on the verge of extinction
կենդանատեսակների փոփոխություն	a change of species
արհեստականորեն բազմացնել	to breed
վիճակագրություն	integral data
կենսամիջավայր	habitat
հանքարդյունաբերություն	mining industry
պոչամբար	tailing depot

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

### **Ռռնացող խնդիր. բնապահպանները դեմ են Հայաստանում գայլերի որսին**

Հայաստանի կառավարության՝ բնակավայրերը պաշտպանելու նպատակով գայլերին ոչնչացնելը պարզապես բարբարոսություն է, ահագանգում են բնապահպանները՝ անդրադառնալով գործադիրի՝

անցյալ շաբաթ գայլերին սպանողներին ֆինանսապես խրախուսելու մասին կայացրած որոշումը:

2014-ին որսած գայլերի դիմաց պարգևատրման գումար վճարելու ծախսը փոխհատուցելու համար կառավարությունն անցյալ հինգշաբթի 20 մլն դրամ (մոտ 50.000 դոլար) է հատկացրել բնապահպանության նախարարությանը: Իշխանությունները համոզված են՝ «Էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու համար որսաշրջանի ընթացքում նախատեսվում է որսալ 200 գայլ»՝ ապահովելով միջոցառման արդյունավետությունը:

Մինչդեռ Էկոլոգիական հասարակական դաշինքի անդամ, բնապահպան Սիլվա Ադամյանն այս նախաձեռնությունը ոչ թե արդյունավետ է որակում, այլ բարբարոսություն, որ իրականացվում է՝ անգամ չխորհրդակցելով բնապահպան մասնագետների հետ: «Առնվազն տարօրինակ է, որ կառավարությունը միակողմանի է նայում խնդրին: Իմ խորին համոզմամբ՝ պետք է իրականացվի գայլերի թվաքանակի մշտադիտարկում, կատարվեն ուսումնասիրություններ: Ոչ մի հրացան, գայլերի ոչնչացմանն ուղղված ոչ մի 20 մլն դրամ չի լուծելու խնդիրը: Այն պետք է լուծվի գիտական ճանապարհով՝ կենդանաբանության ինստիտուտի հետ համատեղ աշխատանքներ տանելով», - ըստ [newsbook.am](http://newsbook.am)-ի ասել է Ադամյանը: Գյուղերում անասունների վրա գայլերի հարձակումները նորություն չեն արդեն մի քանի տարի: Ու ամեն տարի կառավարության մոտեցումը դրանց սպանելն է, բնապահպաններինը՝ այս քաղաքականության վտանգների մասին բարձրաձայնելը:

Ադամյանի խոսքով՝ զարգացած երկրներում խնդիրը լուծելու համար գայլերին չեն սպանում՝ բերելով Մեծ Բրիտանիայի օրինակը, որտեղ գայլերը ոչնչացման եզրին էին հայտնվել, ու հիմա անգամ արհեստականորեն են բազմացնում: Հայաստանում էլ, ըստ բնապահպանի, գայլերի պոպուլյացիան անհապաղ կարգավորման կարիք ունի:

«Կենսամիջավայրի փոփոխության հետևանքով կենդանատեսակների փոփոխություն է կատարվում: Իսկ գայլերը, որ գիշատիչներ են, գնում են դեպի տնային տնտեսություններ, որ հազենան: Եթե չկա կենսամիջավայրում այն կենդանին, որով գայլը սնվում է, նա այլ սնունդ է փնտրում», - ասել է Ադամյանը:

Հատկանշական է, որ գայլերի թվի վերաբերյալ վիճակագրություն չկա: Այս տարի հրապարակված Հայաստանի կենդանատեսակների և թռչնատեսակների քանակի և դրանց նկատմամբ որսի հնարավոր ծավալների մասին ցուցակում, օրինակ, ի թիվս կաչաղակի ու ագռավի, տեղեկություններ չկան նաև գայլերի վերաբերյալ: Այսինքն՝ դրանց որսը չի վերահսկվում:

Ադամյանի տվյալներով՝ վերջին ճշգրիտ վիճակագրական թիվը 15 տարվա վաղեմության է՝ 400 գլուխ գայլ, ինչը, բնապահպանի հաշվարկներով, պիտի նվազած լինի վերջին 3 տարվա ոչնչացումներից հետո:

Մինչդեռ գայլերի դերը բնության մեջ շատ կարևոր է. նրանք սանիտարներ են, ոչնչացնում են թույլ և անառողջ կենդանիներին, կանխարգելում վարակների տարածումը: Իսկ կենսամիջավայրի փոփոխությունը, որի պատճառով նրանք վտանգավոր են դարձել մարդկանց համար, Հայաստանի տնտեսության հիմնական քարշակ հանքարդյունաբերության պատճառով է՝ պոչամբարների տարեցտարի մեծացող թիվ, հորեր ու անտառների ոչնչացում: Վերջին անգամ գայլերի խոշոր հարձակում էր եղել այս տարվա հուլիսին Շիրակի մարզի Ախուրյան գյուղում՝ հոշոտելով 36 գլուխ ոչխար: Այս տարի հարձակումներ են եղել նաև Արագածոտնի, Սյունիքի մարզերի մի շարք գյուղերում և երկրի այլ տարածաշրջաններում, և ամեն անգամ գյուղացիները կորցրել են մի քանի տասնյակ ոչխար:

**Task 2: Make a report about the animals that are on the verge of extinction using the active vocabulary provided in the glossary.**

## Unit 5

### Glossary

մերօրյա բարբարոսներ	latter-day barbarians
հուշարձանների պահպանության վիճակ	state of monument protection
պղծում	desecration
վատ վերահսկողություն	bad surveillance
խուսափել	to refrain from
պատմամշակութային արժեք	a historical-cultural value
համայնքի ղեկավար	community leader
մարզի դատախազ	prosecutor of the province
հուշարձանների բարեկարգում	conservation of monuments
արագ տարածվել	to go viral
բռնության ենթարկել	vandalize
պատասխանատվություն կրել	to bear responsibility
նկարիչների միություն	The Artists Union
բարբարոսական վերաբերմունք	a barbarian attitude
զունավոր մետաղներ	precious metals

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

**Մերօրյա բարբարոսները. վայրագության վերջին դեպքերը  
մտահոգություններ են առաջ բերում Հայաստանում հուշարձանների  
պահպանության վիճակի շուրջ**

Վերջին տարիներին տարբեր վայրերում տեղադրված հուշարձանների պղծումը լուրջ մտահոգության տեղիք է տվել: Շատերի կարծիքով՝ այն վատ վերահսկողության հետևանք է, իսկ քանդակագործներն էլ

խուսափում են նոր հուշարձաններ ստեղծելուց և տեղադրելուց՝ մտավախություն ունենալով, որ դրանք չարժանանան պղծված հուշարձանների ճակատագրին:

Վերջերս լուսանկարիչ Գերման Ավագյանը «Ֆեյսբուքի» իր էջում տեղադրել էր Երևան-Սևան մայրուղում 1980 թվականին տեղադրված «Արձագանք» բրոնզաձույլ արձանի լուսանկարները, որն ամբողջովին կոտորված վիճակում է, ինչն էլ բռուն քննարկումների տեղիք է տվել:

«Իսլամիստներն, ասում եք, անկարգություննե՞ր են գործում Իրաքի թանգարաններում: Սա էլ, երևի, մեր իսլամիստներն են», - գրել է նա:

Հայաստանի մշակույթի նախարարությունից «ԱրմենիաՆատիոն» տեղեկացնում են, որ թեև վերոհիշյալ հուշարձանը պատմամշակութային արժեք չի համարվում, սակայն նրանք դատապարտում են տեղի ունեցածը և նաև փորձում են որևէ կերպ աջակցել:

«Նման դեպքում պղծում կամ վնաս պատճառելը համայնքի ղեկավարի գործառույթներում է, սակայն անհանգստանալով, որ հնարավոր է՝ դա արժեք ունենա՝ պատրաստել ենք համապատասխան գրություն մարզի դատախազին՝ այդ հանցանքը հայտնաբերելու և վնասը վերականգնելու առաջարկությամբ», - «ԱրմենիաՆատիոն» ասում է ՀՀ մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության պետ Արմեն Աբրոյանը:

Ինչ վերաբերում է Երևանում տեղադրված հուշարձանների բարեկարգմանը, Աբրոյանն ասաց, որ քաղաքապետարանի հետ համապատասխան աշխատանքներ են կատարվում:

Քիչ չեն Երևանում պղծված հուշարձանները, իսկ վերջերս շոկային բռնության թիրախում է հայտնվել «ՎՏԲ-Հայաստան» բանկի դիմաց գտնվող պղնձաձույլ արձանը, որի տեսանյութը շատ արագ տարածվեց ողջ համացանցով: Տեսանյութում երիտասարդները բռնության էին ենթարկում արձանը, բայց արդյոք նրանք պատժի ենթարկվե՞լ են, թե՞ ոչ՝ հայտնի չէ:

Քանդակագործ Նունե Թումանյանն «ԱրմենիաՆատիոն» հետ զրույցում, անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ Հայաստանում պղծված հուշարձանների պակաս չկա, և վնասելու դեպքում ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվում:

«Ինչո՞ւ կարելի է մեքենաները հսկել, իսկ հուշարձաններ՝ ոչ, եթե այդ աստիճան է հասել, երբ մարդկանց գիտակցությանը չի հասնում, որ չի կարելի ձեռք բարձրացնել: Երևի պիտի ինչ-որ մեկը պատժվի, որ մյուսը այդ ճանապարհով չգնա», - իր մտահոգությունը հայտնեց քանդակագործը, ով նաև Նկարիչների միության անդամ է, դոցենտ:

Քանդակագործները նշում են, թե քանի դեռ լուրջ վերահսկողություն չկա, նոր հուշարձաններ ստեղծելու և տեղադրելու մտահոգությունը չի փարատվելու:

«Մեծ ցանկություն կա, որ քաղաքում նոր գործեր դրվեն, բայց ո՞նց, երբ տեսնում ես, որ չի պահպանվում», - նշեց նա:

Իսկ քանդակագործ Գագիկ Ղազարյանն էլ կարծում է, որ Հայաստանում բացակայում է արվեստի նկատմամբ սերը, և հուշարձաններ պղծելու հիմքում ընկած է այն, որ մանկապարտեզից սկսած երեխային չեն դաստիարակում սիրել ու գնահատել արվեստը: «Փոքրից սկսած մինչև մեծ պետք է այդ մշակույթը ձեռք բերեն, ձեռք չբարձրացնեն քանդակի, եկեղեցիների, շինությունների վրա: Մենք մեզ գովում ենք, որ հին մշակույթ ունեցող ազգ ենք, բայց ստացվում է, որ ամենաբարբարոս վերաբերմունքն ունենք ու մենք ենք մեր ազգը կործանում», - ասաց նա և նշեց, որ այդ ոլորտում խնդիրները բավականին շատ են:

Հայաստանում շատ դեպքերում հուշարձանները և արձանները բարբարոսության թիրախ են դառնում դրանցում օգտագործված գունավոր մետաղների պատճառով:

**Task 2: Write an article about the state of monument protection using the active vocabulary provided in the glossary.**



## Unit 6

### Glossary

կրքեր Գառնիի շուրջ	Garni controversy
ինտերնետային պարբերական	online publication
նախաքրիստոնեական պաշտամունքային կառույց	a pre-Christian house of worship
հարուցել գայրացած արձագանք	to elicit an angry response
թվագրվել	to date back
վստահեցնել	to give assurances
հնավայր	ancient site
մշտական կառույց	permanent structure
զբոսաշրջային գրավչությունը	the tourist value of the place
վանել	to put off
վստահություն հայտնել	to voice a conviction
պահպանման աշխատանքներ	maintenance work

**Task 1: Render the article that follows using the glossary provided above.**

#### **Կրքեր Գառնիի շուրջ. պաշտոնյան ասում է, որ Հայաստանի միակ հեթանոսական տաճարի մոտ սրճարան չի կառուցվի**

«Գառնի» արգելոցի տարածքում սրճարանը չի կառուցվի, շաբաթավերջին հայտարարել է մշակույթի նախարարության բարձրաստիճան պաշտոնյան: Շաբաթ օրը նախարարությունում կազմակերպված քննարկումից հետո փոխնախարար Արև Սամուելյանը «Հետք» ինտերնետային պարբերականին հայտնել է, որ իրենք հրաժարվել են այդ գաղափարից:

Հայաստանի տարածքում միակ նախաքրիստոնեական պաշտա-

մունքային կառույցի՝ Գառնիի տաճարի հարևանությամբ սրճարան կառուցելու ծրագիրը հարուցել էր հայկական մշակութային և պատմական ժառանգության պահպանությամբ մտահոգ ակտիվիստների զայրացած արձագանքը:

Այդ ակտիվիստներից շատերը նախորդ շաբաթավերջին ի նշան բողոքի, սրճարանի կառուցման մեկնել էին Գառնի (Հայաստանի մայրաքաղաք Երևանից մոտ 30 կմ արևելք): Նրանք, մասնավորապես, Գառնիի արքունական բաղնիքի հարևանությամբ շինհրապարակում հավաքված մի քանի պարկ ավագն ու խճաքարը բերել էին Երևան և դրել մշակույթի նախարարության շենքի առաջ:

Գառնիի ամբողջը թվագրվում է մ.թ.ա. 3-2-րդ դարերով, իսկ ամբողջի շինությունների կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսացող և մ.թ. 1-ին դարում կառուցված հունահռոմեական տաճարը միակն է, որ պահպանվել է Հայաստանի տարածքում 301 թ. քրիստոնեություն ընդունելուց հետո: 17-րդ դարում այն ավերվել է երկրաշարժից, վերականգնվել 1969-1975 թվականների ընթացքում:

Մշակույթի նախարարությունը հուշարձանի տարածքում սրճարանի կառուցումը հիմնավորել է զբոսաշրջության զարգացմամբ, նաև վստահեցրել, որ սրճարանից ստացված եկամուտները կուղղեն դեպի հնավայր տանող սալահատակի նորոգմանը: Բացի այդ, նախարարությունն ասել է, որ սրճարանը մշտական չի լի-մի, այլ գործելու է միայն մայիս-հոկտեմբերին, երբ բազմաթիվ զբոսաշրջիկներ են այցելում Գառնի:

Շատերը, սակայն, համաձայն չէին այս մոտեցմանը՝ պնդելով, որ մման սրճարանը միայն կնվազեցնի հնավայրի զբոսաշրջային գրավչությունը և, հետևաբար, կվանի բազմաթիվ պոտենցիալ այցելուների: Միևնույն ժամանակ, նրանք նաև վստահություն են հայտնել, որ նույն-իսկ առանց լրացուցիչ միջոցների անհրաժեշտ աշխատանքների պահպանման համար գումարները բավարար են:

**Task 2: Compose a dialogue with a public official using the active vocabulary provided in the glossary.**

## Render the Texts into English

### Text A

#### «Պատմության հետքերով»

#### Կարմիր բլուրում հայտնաբերված գտածոների ցուցահանդես

Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը ներկա է գտնվել Երևան քաղաքի պատմության թանգարանի սրահում «Պատմության հետքերով» խորագրով ցուցահանդեսի բացմանը: Ցուցահանդեսում ներկայացված են Կարմիր բլուր պատմամշակութային հնավայրում հայտնաբերված գտածոները, որոնք թվագրվում են Ուրարտուի ժամանակաշրջանից մինչև մ. թ. ա. 1-ին դար: Այս հնավայրը բաղկացած է նախաուրարտական բնակավայրից, միջնաբերդ ունեցող ուրարտական քաղաքից: Մ. թ. ա. 6-րդ դարից մ. թ. 1-ին դարն այն ծառայել է որպես դամբարանադաշտ: Ցուցադրությունում ներկայացված են կենցաղային խեցեգործական ու ապակե առարկաներ, զարդեր, զենքի բրոնզե մասեր և այլն:

Տարածքը հայտնաբերվել է 1939 թ., առաջին պեղումներն ավարտվել են 1968 թ., դրանց ընթացքում պարզվել է նաև քաղաքի անունը, որը արձանագրությունում նշվում է Թեյշեբաինի անվամբ:

Հնավայրում պեղումների երկրորդ շրջանը սկսվել է մայրաքաղաքի կենտրոնի երթևեկության բեռնափամբ պայմանավորված ճանապարհաշինական ծրագրի արդյունքում: Երևանի քաղաքապետարանի նախագծով այստեղ կառուցվելու է ասֆալտապատ ճանապարհ՝ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածը, ինչպես նաև կամուրջ՝ Հրազդանի կիրճի լայնությամբ:

«Ճանապարհի կառուցումը դարձավ պատճառ, որ հայտնաբերվի Կարմիր բլրի դամբարանադաշտը: Նախագիծը փոխըմբռնման եղանակով է արվում, որպեսզի և քաղաքը շահի, և՛ մեր պատմամշակութային արժեքները վերահանվեն ու ևս մեկ անգամ ներկայացվեն հանրությանը, աշխարհին»- նշել է Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը և հավելել, որ ճանապարհի կառուցումը նաև մեխանիկորեն կսահմանափակվի Կարմիր բլրին հարակից գերեզմանի ընդլայնումը:

## Text B

### **Բնապահպաններն այսօր բողոքի ակցիա էին կազմակերպել ղելֆինարիայի դիմաց**

Ուրբաթ Հայաստանում առաջին ղելֆինարիայի բացումը սկսվել է բողոքի ակցիայով: Բնապահպանները նախագրուշացնում են մարդկանց, որ ղելֆինարիան վնասում է ոչ միայն ղելֆինների ու ծովային մյուս կենդանիների առողջությունը, այլև լուրջ վտանգ կարող է ստեղծել երեխաների համար:

Ղելֆինարիայի գովազդում նշվում է, որ այն կարող է ունենալ թերապևտիկ ազդեցություն, երեխաները կարող են լողալ և լուսանկարվել ջրում ծովային կենդանիների հետ՝ հաշվի չառնելով, որ նման ոչ բնական և աննորմալ պայմաններում ապրող ղելֆինները կարող են սթրես տանել, ազդեցիվ դառնալ ու վնասել երեխաներին:

Դա հաշվի առնելով՝ Խորվաթիայում և մի շարք այլ եվրոպական երկրներում պաշտոնապես արգելել են ղելֆինարիա ստեղծելը, աշխարհի մյուս երկրներում էլ փորձում են փակել ղելֆինարիաները, - ասում է Հայաստանի վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրենը:

Օրական 100 կմ տարածք լողացող 2,5 մ երկարություն ունեցող ղելֆիններն ապրելու են 16 մ երկարություն և 5 մ բարձրություն ունեցող լողավազանում: Բնապահպանների հավաստմամբ՝ կես տարուց քլորացված ջրից և ծովային ջրի բացակայության պատճառով նրանք կկուրանան:

Ներումեն կազմակերպության ներկայացուցիչները հերքում են բնապահպանների մտահոգությունները՝ հրաժարվելով անցկացնել հասարակական լսումներ և տալիս են իրենց բացատրությունները, որոնք երբեմն չհիմնավորված են:

Ղելֆինարիայում կան մեկ ծովառյուծ, երկու ծովային կատու և չորս ղելֆին: Այն իր հարկի տակ կարող է ընդունել մինչև 900 այցելու, տոմսերն արժեն 2000-3000 դրամ (մոտ 6-8 դոլար), մինչև 5 տարեկան երեխաների մուտքն անվճար է:

## **KEYS**

### **PART I POLITICS**

#### **Unit 1**

##### **Constitutional Reform: Expert commission “in favor of parliamentary system”**

“Armenia’s commission set up to draft constitutional amendments, is working in the direction that implies a transition to a parliamentary system of government”, told constitutional law expert Vardan Poghosyan.

“We are working on the same draft, and, depending on the nature of political consultations and the proposals of political forces, some modifications are possible,” Poghosyan said.

Earlier, the ruling Republican Party of Armenia did not rule out that two packages of constitutional reforms might be submitted to the National Assembly for discussions, with one of them envisaging an improved form of the current semi-presidential form of government.

The Commission working on the draft said it had received proposals on the concept of constitutional changes from as many as 14 political forces. On May 18-19 the concept is expected to be discussed with representatives of the Venice Commission in Paris, France.

Most of Armenia’s leading opposition parties represented in the National Assembly have not backed the reform.

## **Unit 2**

### **U.S. report presents problems in human rights practices in Armenia**

The U.S. Department of State's Bureau of Democracy, Human Rights and Labor has issued reports on human rights practices worldwide for 2013.

The country report for Armenia notes some issues in different spheres that have been reported over last year.

“The most significant human rights problems during the year were corruption and lack of transparency in government, limitations on the right of citizens to change their government, and the limited independence of the judiciary. Allegations of persistent corruption at all levels of government undermined the rule of law, although the government took limited steps to punish corruption by low- and mid-level officials,” says the executive summary of the report.

The report also noted that despite candidates' ability to campaign freely, flaws in the conduct of the presidential election included a lack of impartiality by the public administration, the misuse of government resources to support the ruling party, credible allegations of vote buying.

The report also dwells on other abuses, alleged corruption cases and problems with human rights reported during the year.

## **Unit 3**

### **Stimulating Exports: New Government-drafted bill sparks debate in parliament**

Heated debate unfolded in the Armenian parliament this week around a new government-drafted legislation cutting dramatically the corporate profit tax rates for large exporters. Under the original bill submitted to the National Assembly manufacturers exporting goods worth at least 50 billion (about US\$105 million) annually will not have to pay a 20-percent tax, but will be

allowed to pay only a 2-percent profit tax. This, the government believes, will stimulate export growth.

Meanwhile, critics of the initiative point to the fact that today there is only one business in Armenia that can become a beneficiary of this legislation and it is in the mining industry. But the government by the proposed law excludes the mining industry from the list of possible beneficiaries. The government says the law in fact holds out new possibilities for investments in Armenia with the purpose of organizing exports.

Orinats Yerkir MP Mher Shahgeldyan, however, sees risks for local producers if the law is adopted.

Opposition lawmakers argue that the passage of the bill will create a situation when investors from abroad may come and monopolize all exports, while such decisions will restrict others. “The so-called opportunity cost is increasing,” said Hrant Bagratyan, a former prime minister now affiliated with an opposition parliamentary faction.

Under the proposed legislation, for the tax privileges to be granted to them exporting companies will also have to have a government-approved export program and should not be receiving revenues in the territory of Armenia.

## **Unit 4**

### **Changing Basic Law: Armenian leadership reaffirms plans for constitutional reform**

The current administration will press ahead with a constitutional reform that is expected to turn Armenia into a parliamentary republic, Parliament Speaker Galust Sahakyan said on Thursday.

Naira Zohrabyan, the newly elected leader of the PAP, said during a press briefing on Thursday that the party needed some time to develop its further tactics. In a quick reply to one of the media questions concerning the PAP’s attitude towards the constitutional reform, she said that the party’s position

on this issue has not changed. She did not specify, however, whether the PAP will continue to actively oppose the reform.

Talking to reporters, the senior member of President Serzh Sargsyan's ruling Republican Party of Armenia (RPA) said that corresponding draft amendments to the Armenian Constitution are likely to be put on a referendum by early next year.

